Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8275.

917.9287
P-83

19 AUG 2006
№ 703.

ԸՆԵՏԻՐ

ԼԱՅՍԱԶՈՒՐՆԵՐ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ
1873

19.04.2013
8275
9(47.925)
Р-83
572
Центральная
ИНВЕНТАРНЫЙ
№ 743
№ 2416
05 SEP 2011
Ленино
1936 г.
Х-67
ՀԱՅԿ
ՀԱՅԿ-ՍՍՀ Ա.
2869
41

Հայկ մեր ազգին նախահայրը՝ որ Նոյի որդւոյն Յաբէթէն չորրորդ կը համարուի, էր դիւցազն այր գեղապատշաճ և անձնեայ. բայց իրեն աւելի ճիշդ և սեպհական մակդիրքն են՝ հաստաղեղն և կորովաձիգ։

Մինչդեռ Բաբելոն կը բնակէր շատ երուանդներ և ընդոծիններ ունեցաւ. բայց ստիպուեցաւ անկից ելլել, երբ աշտարակաշինութեան պատճառաւ լեզուները խառնակեցան, և Բէլ ամբարտաւանութեամբ կ'ուզէր ամենուն վրայ բռնանալ։ Դարձաւ յԱՅրարատ, և հոն առաջին բնակութեան տեղը ժառան-

գութիւն թողլով իր Կաղմոս թոռանը, ինքը դէպի արևմտեան հիւսիս յառաջ երթալով հասաւ լեռան մը մօտ գեղեցիկ դաշտ մը, ուր չինեց գիւղ բնակութեան և կոչեց իւր անուամբը Հայկաշէն. հոն գտնուած սակաւաթիւ բնակիչներն ալ ինքնակամ հնազանդեցան Հայկայ։

Բայց մեր Նահապետին խաղաղութիւնն երկար չիտևեց, վասն զի Բելայ պատգամաւոր եկան հրաւիրեցին զնա'ի հնազանդութիւն, խոստանալով շատ պարգևներ և ազատութիւններ եթէ յանձն առնու հպատակիլ Բելայ. այլ նա արհամարհեց և մերժեց, և խիստ պատասխաններով ետ դարձուց զանոնք։ Երբ լսեց Բել Հայկայ խրոխտ պատասխանները՝ սրտմտութեամբ լցուած բազմութեամբ զօրաց եկաւ մեր գիւղաղնին վրայ։ Կաղմոս նախ լսելով Բելայ սպառազինութեամբ մօտ հասնիլը՝ թողուց բնակութիւնը և եկաւ ապաւինելու Հայկայ քով։ Հայկ մեկէն դումարեց իր որդիքը, թոռները և քաջ աղեղնաւոր հաւատարիմ պաշտօնեաները, որոնք ընդ ամենն թէպէտ նուազունք թշնամւոյն բանակին համեմա-

տութեամբ, սակայն հզօրք և քաջք, խրախուսեալ հասան Վանայ ծովուն մօտ. ուր Հայկ իրենինները քաջալերելէն ետքը՝ պատուիրեց որ աւելի մը տագրութիւններն և ուժերնին չարեացապարտ Բելայ վրայ դարձընեն. յետոյ բանակեցուց զանոնք բարձր բլրոյ մը վրայ, ուսկից թշնամւոյն պատրաստութիւնները և կազմութիւնն որոշակի կը տեսնուէին։ Բել զրահաւորեալ, սաղաւարտ գլուխը, վահան և տէգ ձեռքը, և բոլորտիքը բազմութիւն զինուորաց, յառաջ կու գար։ Հայկ ալ դասաւորելով իրենիններն, դրաւ երկու որդիքը բանակին երկու թևերուն, որոնք աղէկ սուր և աղեղ գործածել գիտէին. ինքն ալ նախընթաց առաջնորդելով մնացած զօրաց՝ եռանկիւնի մը ձևացուց բանակը. և այս պատրաստութեամբ երկու կողմանէ ալ սկսան յառաջ խաղալ։

Ահաւոր տեսարան մը բացուեցաւ երբ թշնամեաց կողմանէ բազմութիւն երկայնահասակ և յաղթանդամ զինուորաց՝ Հայոց զիւցազանց հարուածէն յերկիր կը թաւալէին, և զինուց և

պատերազմին աղաղակէն կը սարսա-
փէին լսողք։ Ա.յսպէս երկար ատեն ան-
պարտելի կերպով կռուելէն ետքը, Բել
որ չէր յուսար ամենեին այսչափ ընդ-
դիմամարտութիւն գտնել 'ի Հայոց, սկը-
սաւ ետ քաշուիլ և երկու բլրոյ մէջ ամ-
բանալ, որպէս զի իրեն բովանդակ զօր-
քը հասնի, և նորէն պատերազմին։
Բայց մեր հաստաղեղ և կորովաձիգ դիւ-
ցազն արթնութեամբ դիտելով թշնա-
մւոյն այս պարտութեան շարժումը՝ ա-
ռաջ կը նետուի, կ'ուղղէ և կը քարշէ
լայնալիճ աղեղը, և երեքթևեան սլաքը
իսկոյն անսխալ կ'երթայ կը բախէ տի-
տանեանն Բելայ կուրծքին տախտակը,
և թափ անցնելով յերկիր կը մխի. և
ահա մէկէն ահագին սասանմամբ վիթ-
խարի հողաբլուր զանգուածը յերկիր
կը թաւալի և հոգին կը փչէ։ Ա.յսպիսի
դիւցազնական քաջութիւնը տեսնելով
թշնամւոյն բեկեալ զօրքն կը թողուն
կը փախչին, և Հայկ կը տիրէ անոնց ա-
մեն կազմածոցը և աւարին։

Մեր դիւցազն նախահայրն Հայկ Բե-
լայ յաղթանակելէն ետքը, որպէս զի
յաւիտենական յիշատակը մնայ այսպէ-

սի քաջութեան, դաստակերտ մը կը շինէ
ուր տեղ որ պատերազմն եղաւ և Հայք
կը կոչէ զայն, որ հիմայ Հայոց ձոր
կ'անուանի. իսկ բլուրը՝ ուր ընկաւ տի-
տանեանն իր կարիճներովը՝ Հայկ Գե-
ղեզմանեաց կ'անուանէ. և Բելայ դիակն
ալ կը հրամայէ տանել 'ի Հարք, և հոն
տեղ բարձր բլրի մը վրայ թաղել 'ի յի-
շատակ դիւցազնական քաջութեանը։
Յետոյ Կադմոսի՝ իրեն թոռան՝ շատ մը
թշնամւոյն կողոպուտէն պարգև տալով
կարիճ անձինքներով իւր բնակութիւնը
կը դարձընէ. ինքն ալ կը դառնայ 'ի
Հարք իր բնակութիւնը. ուր արիական և
իմաստուն առաջնորդութեամբ իրենին-
ները կառավարելէն, և երկիրը շինու-
թիւններով և բարեկարգութեամբ զար-
դարելէն ետքը՝ խաղաղութեամբ կը
վախճանի, յանձնելով իր անդրանկան
Արմենակայ՝ աղգին կառավարութիւնը։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱՎԹԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ՏԻԳՐԱՆ Բ.

Մեր Արշակունի թագաւորաց մէջ գրեթէ ամենէն անուանին իր մեծագործութեամբք և համբաւոյն եղած է Տիգրան միջին անուանեալն, և ամենէն ծանօթն է օտարազգաց։ Մենք խորհնացուցոյն պատմութեանը հետևելով գիտենք թէ երբ իր հայրն Արտաշէս Ա. մեռաւ՝ ընդարձակ տէրութիւն մը թողուց իրեն. բայց շատ տեղ ապստամբութիւններ եղան, այնպէս որ եթէ Տիգրան հօրը ոգին և քաջութիւնը չունենար, թերևս և ոչ Հայաստանը կըրնար ապրեցընել։ Իսկ ինքն նաև դրսէն եկող թշնամեաց դէմ եղաւ յաղթեց,

և առաջ երթալով Ասիոյ մէջ տիրեց դրեթէ ամբողջ փոքր Ասիոյ. և Միհրդատը թողուց Պոնտոսի վրայ թագաւոր անուամբ. ինքը դարձաւ Հայաստան, հետը բերելով իր տիրած տեղերէն կուոյ արձաններ, քուրմեր և շատ մը գերի՝ որոնք դրաւ այլ և այլ տեղեր. և խստիւ հրաման հանեց Բագրատունեաց որ թողուն իրենց հրէութիւնը և պաշտեն կուռքերը. երբոր անոնք յանձն չառին, զօրավարութեան պատիւը առաւ անոնցմէ, միայն թագաւորները պատկերու պատիւը թողուց։

Տիգրանայ ժամանակը Ասիոյ մէջ երբէք զատ զօրաւոր թագաւոր մը չկար. և եթէ օտար ազգաց պատմածին նայինք՝ որոնք կը նկարագրեն իրեն զօրութիւնը և արքունեաց ճոխութիւնը, այնչափ բարձրացաւ իրեն սիրտը որ մինչև կը կարծէր թէ ամենքն պէտք է իրեն հնազանդին. և իր գերի բռնած թագաւորներէն չորսը իրեն կը ծառայեցընէր։ Սելևկիացւոց տերութիւնը արդէն տկարացած ըլլալով, երկու եղբարք՝ Անտիոքոս Պիոս և Փիլիպպոս ութ տարի կը կռուէին թագաւորութեան

վրայ, Սելևկիացիք ձանձրացած ընտրեցին օտար տէրութեան մը իշխանութեան տակ մնալ, և ուղեցին հնազանդիլ Տիգրանայ։ Սա ալ գնաց հալածեց զԱնտիոքոս և Սելևկիացւոց թագաւորութիւնը վերցուց, և Մազդատ անուանով անտիոքացի մը իրեն տեղակալ դնելով, ինքը գնաց Հրէաստանի վրայ, ըստ խորենացւոյն, և շատ գերիներ բերաւ 'ի Հայաստան։

Երբոր Միհրդատ Լուկուլլոսէն յաղթուած Տիգրանայ քովը փախաւ, նոյն ժամանակը Կղէոպատրա թագուհին որ կ'իշխեր Ասորւոց երկրին մէկ մասին վրայ, սկսաւ գրգռել Ասորիքը և Սելևկիացիքը Տիգրանայ դէմ։ Այն առեն Տիգրան գնաց Պաղեստինայ քաղաքը պաշարեց առաւ, և թագուհին ալ գերի բռնեց սպաննեց։

Տիգրանայ պատմութիւնը խսկզբան մեղի կը ներկայացընէ Ասիոյ մէջ երևցած մեծ թագաւորաց օրինակը, մասնաւոր անոնց՝ որոնք յետ այնչափ զօրաւոր և մեծ տէրութիւն մը ունենալու՝ դժբախտութեամբ մը իրենց փառքը շլացուցին. ինչպէս են Կրեսոս,

Քսերքսէս, Դարէհ, Մեծն Ադիրոս, և այլն. Տիգրան ալ նման վիճակի հանդիպեցաւ։ Երբոր Լուկուլլոս ուզեց Տիգրանէն որ Միհրդատը իր ձեռքը մատնէ և կամ պատերազմ ընէ, Տիգրան թէպէտ սաստիկ բարկացած էր Միհրդատայ վրայ, բայց և ոչ վատութեամբ ուզեց զինքը մատնել, այլ Հռովմայեցւոց դեսպանաց պատասխան տուաւ, որ ինքը պատրաստ է Հռովմայեցւոց հետ պատերազմելու քան իրեն աղգականը և բարեկամը իրենց ձեռքը մատնելու։ Այն ատեն Հռովմայեցիք Հայաստանի վրայ եկան, և որպէս զի գրգռուի Տիգրան իրենց վրայ դալու ամենէն առաջ Տիգրանակերտը պաշարեցին։ Եւ յիրաւի Տիգրան բարկացած՝ բազմութեամբ զօրաց հոն եկաւ. բայց երբոր տեսաւ իրենց քիչուորութիւնը արհամարհելով այս հաչակուած խօսքերը զուրցեց «եթէ ասոնք դեսպանութեան եկեր են շատ են, իսկ եթէ պատերազմի՝ քիչ են». և այս ըսելով զօրաց կարգ չդրաւ և ինքն ալ անհոգ կեցաւ։ Հռովմայեցիք այս տեսնելով յանկարծակի յարձակեցան Հայոց վրայ. այն

ատեն Տիգրան չփոթած փոխանակ առաջ երթալու նշան տալու, ետ քաշուելու նշան տուաւ, որով բոլոր զօրքը խառնվեցան և Հռովմայեցիք շատ մարդ կոտրեցին իրենցմէ. Տիգրանակերտ քաղաքն ալ առին։ Տիգրան աճապարեց Հայոց հեծելազօրքը խաւրեց, որոնք հանդիպելով Հռովմայեցւոց հեծելազօրին՝ զարկին. Լուկուլլոս հետևակ զօրքը առած աճապարեց օգնութեան դալու. Հայք երբոր զինքը տեսան՝ փախչելով ալ հեռուէն նետերով զիրենք հալածողները կը վիրաւորէին։

Երբ Տիգրան և Միհրդատ նորէն միաբանեցան և Տիգրան Կապադովկիոյ վրայ կը դիմէր, ուզեց Լուկուլլոս անոր դիմացը ելլել և դարձեալ յանկարծակի յարձակմամբ յաղթել բայց զօրքն չուզեցին պատերազմել. այլ երբ Լուկուլլոսին տեղ Պոմպէոս եկաւ, Տիգրան անոր հետ հաշտութիւն ըրաւ և առանց կռուի անցաւ Պոմպէոս Հայաստանէն։

Այս հաշտութենէն ետքը Տիգրան քանի որ դեռ կենդանի էր իր Արտաւազդ որդին թագաւորեցուց իր հետ։ Երբոր Գաբիանոս Հռովմայեցւոց զօրա-

վարը եկաւ Ասորւոց երկրին վերակացութեան, դարձեալ մէջերնին գժտութիւն ծագեցաւ, և Տիգրան նորէն շատ երկիրներ նուաճեց։ Կրասոսին Պարթևացմէ յաղթուելէն ետքը՝ երբոր Տիգրան արդէն ծերացած՝ ուզեց Պարսից Արշէզ թագաւորին հետ հաշտութիւնը պահել, տուաւ անոր նախադասութիւնը, զոր իր հայրն յափշտակեր էր 'ի Պարթևաց։ Այսպէս միաբանած երկու կողմանէ դունդ կազմեցին. Տիգրան Բարզափրան Ռշտունեաց նախարարը սպարապետ դրաւ, Արշէզ ալ իր Բակուր որդին, և խաւրեցին 'ի Փիւնիկէ, Ասորիք, ու Պաղեստին։ Բայց Տիգրան ասոր վրայ շատ չապրեցաւ և 85 տարուան մեռաւ 54 տարի թագաւորելէն ետքը։ Այս Տիգրան թագաւորին արծաթ և պղինձ դրամներն կը գտուին, ուր կը տեսնուի կարիճ կերպարանքն առանց մօրուաց։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱՎԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ԱՐՏԱՇԷՍ Բ

Եթէ թագաւոր մը իր պարծանքը զօրութեան վրայ կամ աշխարհակալութեանց վրայ միայն կը դնէ, ոչ իր ազգին և ոչ օտարաց օգուտ կը գործէ, այլ խռովութիւն, կոտորած և աւերմունք. իսկ ընդ հակառակն թագաւոր մը որ գիտէ խաղաղութեամբ իր ժողովուրդը երջանկացընել, գիտէ իր տէրութիւնը ծաղկեցընել, գիտէ հանճարը յարգել և գիտութեանց ետևէ կ'ըլլայ, ասոնք զինքը կ'անմահացընեն։ Պատմութեանց մէջ այնպիսի ժամանակներ ոսկեղէն դար կ'անուանին, յորում՝ ոչ միայն թագաւորին մեծութիւնը կ'ե-

ռևայ, այլ նա և իր հպատակացը ձիրքերը. բայց դարձեալ թագաւորն է որ գիտէ այն հանճարները գործածել, իրենց ծառայութիւնը վարձատրել, և միանգամայն զինքը սիրելի ընել ամենուն։ Այսպիսի թագաւորներէն մէկն կ'երևի մեր Արտաշէս Բ Արշակունին, որուն վրայ յայտնապէս կը տեսնենք աշխարհաշինութեան և իր ազգին յառաջադիմութեան մեծ սէր։

Արտաշէսի պատմութիւնը գրեթէ իր առաջին մանկական հասակէն կը սկսի. իր եղբարցը սպանուելու ատեն՝ ինքը Երուանդ բռնաւորին ձեռքէն փախաւ Պարսից երկիրը, և հոն իբրև որդի թագաւորի արքունեաց մէջ մեծցաւ՝ Սըմբատ Բագրատունւոյն խնամակալութեան տակ։ Երուանդ երբ իմացաւ՝ ետևէ եղաւ զինքը ձեռք բերելու. թէ Պարսից Դարեհ թագաւորին և թէ Սըմբատայ գրելով թէ մանուկը հարազատ Արշակունի չէ, և թէ ետ կենան այնպիսի խորհրդէն, և տղան իրեն խաւրեն. բայց խիստ պատասխաններ ընդունելով յուսահատած քաղաքները պատսպարեց, նոր քաղաք մի չինեց Երուանդա-

կերտ անուամբ և հոն իրեն մասնաւոր պալատ մը. որուն մէջ ծածուկ ճամբաներ չինել տուաւ, որպէս զի դաւաճանութեամբ ձեռք չիյնայ։ Երբ Արտաշէս քսան տարուան եղաւ՝ Պարսից թագաւորն ուզեց Սմբատը վարձատրել, իրեն ըրած ծառայութեանց համար, ուստի հարցուց թէ ինչ կը ցանկայ։ Սմբատ իր միտքը յայտնեց, որ իրեն զօրք տայ և երթայ Արտաշէսը թագաւորեցընէ Հայոց վրայ։ Թագաւորը հաւանեցաւ և տուաւ Սմբատայ զօրք և Երուանդայ վրայ խաւրեց։ Երուանդ այս լսելով՝ ժողվեց բոլոր զօրքերը և Սմբատայ բանակին վրայ դիմեց։ Սմբատ վախ չունէր Երուանդէն. միայն Արգամ անունով հետևակ զօրաց զօրավարէն կը կասկածէր. վասն զի թէ ինքը քաջ մարդ էր և թէ իր գունդքն զօրաւոր էին։ Անոր համար Արտաշէս մարդ խաւրեց համոզեց Արգամը որ իր կողմն անցնի։ Երբոր պատերազմը սկսաւ՝ Արգամ ալ իր զօրքովը Արտաշէսի կողմն անցաւ. անոր նայելով ուրիշ նախարարներ ալ անցան. մինչև մութ պատերազմ շարունակեց. և երկու կողմանէ ալ սաս-

ակ կտրած կար, բայց վերջապէս Երուանդ յաղթուեցաւ և փախաւ իր քաղաքը։ Այս պատերազմին մէջ քիչ մնաց որ Արտաշէս պիտի սպաննուէր, եթէ իր դայեկին որդին Գիսակ զինքը չազատէր. Սմբատ մէկէն պզտի գնդով մը Երուանդայ ետևէն գնաց, և քաղքին դռները թող չտուաւ դոցել մինչև եկաւ Արտաշէս, մեռելները թաղել տուաւ, առաւ քաղաքը, և Երուանդը իր պալատանը մէջ սպաննեց։

Հայրենական երկրին տիրելէն ետև թագաւոր պսակուեցաւ Սմբատէն՝ Սանատրկայ թագովը, և իրեն բոլոր բարեբարքը վարձատրեց. առաջ Պարսից թագաւորին զօրքերը, և խաւրեց իրենց երկիրը. իսկ Արգամայ ինչպէս որ խոստացեր էր՝ երկրորդ գահը տուաւ, թոյլ տալով որ պսակ ալ դնէ գլուխը և օղեր կախէ, նոյնպէս իշխանութիւն ունենայ ոսկեղէն բաժակով խմել և ոսկեղէն դգալ և պատառաքաղ գործածել։ Սմբատը բոլոր զօրաց սպարապետ դրաւ. Գիսակայ որդւոյն Ներսէսի ցեղը նախարարութեան կարգը անցուց Դիմաքսեան կոչելով, իր հօրը երախ-

տեայը համար։ Յետոյ Սմբատայ ձեռքով Երուանդայ եղբայրը Երուազ քրմապետը սպաննեց և իրեն քով գտնուած գանձը Դարէհին խաւրեց 'ի շնորհակալութիւն։

Արտաշէս ձեռք զարկաւ աշխարհաշինութեան. նախ Արտաշատ քաղաքը նորոգեց Երասխ գետին քով, մէջը պալատներ շինեց և չորս կողմը նոր պարիսպ քաշեց, տաճարներ կանգնեց, և Երուանդակերտի բոլոր զարդերը հոն փոխադրեց և իրեն մայրաքաղաք ըրաւ։ Այս ատեններս Ալանք միաբանած ուրիշ բարբարոս ազգայ հետ Հայաստանի վրայ եկան. Արտաշէս դիմացնին ելաւ իր Սմբատ սպարապետովը. կուր գետին քով սաստիկ պատերազմ եղաւ, և Ալանայ թագաւորին որդին գերի բռնուեցաւ. երբոր գիշերը վրայ հասաւ՝ Ալանք քաշուեցան գետին միւս կողմը, և Հայք անոնց ետևէն մինչև գետին եղերքը եկան։ Ալանայ թագաւորն ուզեց հաշտութիւն ընել և դաշինքը հաստատուեցաւ այսպէս. որ Արտաշէս անոր որդին դարձընէ, ան ալ իր աղջիկը Արտաշէսի հարսնու-

թեան տայ. այսպէսով պատերազմն լմընցաւ, և Սաթինիկ Աշանաց թագաւորին աղջիկն Հայոց թագուհի եղաւ։

Արտաշէս ետուէ եղաւ բոլոր Հայաստանը բարգաւաճեցընել. անոր համար օտար երկիրներէն գաղթականներ բերել տուաւ, մշակութիւնը ծաղկեցուց, շինեց աշտարակներ, կամուրջներ. նոյնպէս արուեստից դպրոցներ դրաւ. ետուէ եղաւ աստղաբաշխական և ուսումնական գիտութիւններ ալ սորվեցընել։ Երկիրը խաղաղութեան մէջ էր, և բոլոր ժողովրդեան վրայ գործունէութիւն մը եկեր էր. որով բոլոր շրջակայ աշխարհաց նախանձելի եղաւ Հայաստան, և շատերը կու գային հոն բնակելու։

Արտաշէս Սաթինիկէն շատ զաւակներ ունեցաւ, որոնց անդրանիկն կը կոչուէր Արտաւազդ. յետոյ Վրոյր, Տիրան, Մաժան, Զարեհ, և այլն։ Արտաւազդ բնութեամբ խրոխտ և փառասէր անձ մ'ըլլալով, նախանձեցաւ Արգամայ պատուոյն վրայ, ուստի միտքը դրաւ որ անոր իշխանութիւնը առնու. անոր համար հօրը ամբաստանեց իբր թէ կ'ուզէ Արգամ թագաւորել։ Արտաշէս չի-

մացաւ որդւոյն չարութիւնը, և մեծ գժտութիւն ծագեցաւ իր և Արգամայ մէջ. այս դէպքիս մէջ աղէկ երևեցաւ Արգամայ վեհանձնութիւնը և հաւատարմութիւնը. բայց վերջապէս Արտաւազդայ կրիցը զոհ եղաւ ինքը և իրեն ընտանիքն։ Այս առիթներս Պարսկաստան խռովութիւն կար թագաւորութեան համար, վասն զի Արշակ շորրորդ մեռնելով Արտաշէս անոր որդին Արտաշէսը թագաւոր դրեր էր. բայց Պարսիկք չհնազանդեցան անոր, այն ատենը մեր Արտաշէսը խաւրեց զԱմբատ և խռովութիւնը խաղաղցուց և Արտաշէս Պարսիկը թագաւորեցուց։

Արտաւազդ Ամբատայ վրայ ալ նախանձեցաւ և ուզեց զօրայ սպարապետութիւնը առնուլ. բայց այս անգամուս Արտաշէս որդւոյն դէմ կեցաւ. Ամբատ երբոր տեսաւ այս գժտութիւնը իր պատճառաւ, թողուց զօրավարութիւնը և քաշուեցաւ Ասորեստանի կողմը. Արտաւազդ երբոր իր փափաքանացը հասաւ, մէկալ եղբայրները նախանձեցան և մեծ հակառակութիւն բացուեցաւ. Արտաշէս խաղաղացընելու

համար ամբողջ զօրքը չորս մաս բաժ-
նեց. արևելեան զօրքը տուաւ Արտա-
ւազդայ ձեռքը, արևմտեանը Տիրանայ,
հիւսիսայինը Զարեհի և հարաւայինը
Սմբատայ. Վրոյը որդին ալ տերութեան
գործոցը վրայ դրաւ և Մաժանը քրմա-
պետ։ Այս կարգաւորութիւնը ընելէն
ետև՝ վատահացած որդւոցը քաջու-
թեանը վրայ՝ չուզեց Հռովմայեցւոց հար-
կը տալ. ան ատեն Տրդիանոս զօրք խաւ-
րեց Հայոց վրայ։ Անոնց դիմացը ելաւ
Տիրան իր զօրքովը և յաղթուեցաւ.
Հռովմայեցիք սկսան առաջ դալ. վրայ
հասան Արտաւազդ և Զարեհ իրենց
զօրքերովը, և հոն սաստիկ պատերազմ
եղաւ, և քիչ մնաց որ դարձեալ պիտի
յաղթուէին. բայց Սմբատ վրայ հասաւ,
զօրաց ճակատը փոխեց, և քիչ ատե-
նուան մէջ յաղթութիւնը ստացաւ և
թշնամեաց սաստիկ կոտորած մը տուաւ։
Կոտորածէն ետև Հայք իրենց սահմա-
նէն անդին անցան և արշաւեցին կա-
պադովկացւոց երկիրները։

Տրդիանոս ինքնին եկաւ Հայոց և
ուրիշ ապստամբող տերութեանց վրայ.
այս անգամուս Արտաշէս սիրտ չբրաւ

պատերազմել, ուստի ընծաներով ընդ
առաջ գնաց Տրդիանոս կայսեր և ի-
րեն բարկութիւնը իջուց։

Երբոր Արտաշէս Պարսից երկիրը
կ'երթար՝ ճամբան հիւանդացաւ և բը-
ժիշկներէն ճար չգտնելով՝ յուսահա-
տած դիմեց աստուածոց. բայց իր խաւ-
րած նուէրքը դեռ տեղը չհասած՝ ինքը
մեռաւ Մարանդ գաւառին մէջ։ Բոլոր
ժողովուրդը զինքը լացին իբրև հայր մը
և իբրև իմաստուն թագաւոր մը. և իբրև
սիրոյ նշան՝ շատերը ինքնանուէր ի-
րենք զիրենք զոհեցին անոր գերեզմա-
նին վրայ։ Իր բոլոր կեանքը և գործը
բանաստեղծից աշխոյժը բորբոքեց, և
իբրև դիւցազն՝ ժողովրդեան բերանն էր
երգերով։ Աբքայավայել փառաւոր թա-
գուհի մը տուին, ինչպէս որ կը նկարա-
գրէ մեր պատմիչն Խորենացի։ Թագա-
ւորեց Արտաշէս Քրիստոսի 88 թուա-
կանին, և 128ին մեռաւ իբրև 60 տա-
րուան։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ԱՇԽԷՆ ՏԻԿԻՆ ՀԱՅՈՑ

Իրաւցընէ Արշակունի թագուհեաց մէջ՝ ամենէն առաքինին և միանգամայն ամենէն արիասիրաներէն մէկն է Աշխէն Տիկինն Հայոց, որ բարուցը հետ միացուցած էր նաև շնորհք մարմնոյ, գեղեցկութիւն և վայելուչ հասակ, միով բանիւ արժանաւոր՝ Տրդատայ մը պէս թագաւորի։

Տրդատ ջախջախեր էր բոլոր Հայաստանի թշնամիքը, երբ Աւանաց Աշխադար թագաւորին դուստրը Աշխէն, խնդրեց իրեն կին. և այս բանիս համար ամենէն աղնուական նախարարներէն մէկը՝ Սմբատ բագրատունին,

դեսպան ղրկուեցաւ. որ ամեն բան շուտ մը յարմարցնելով, փառաւոր բերաւ զԱշխէն առ Տրդատ, նախ հրամայեց Արշակունի դրել զԱշխէն, յետոյ ծիրանի հագցընելով և թագով պսակելով, զինքը Հայոց թագուհի հռչակեց։

Երբ Տրդատ կռոց վրէժխնդիր արքայն՝ Ս. Լուսաւորչի ձեռքով Քրիստոսի լուծը ընդունեցաւ իր թագուհւոյն հետ, երկուքն մէկտեղ սկսան բոլոր Ազգին դարձը հոգալ։ Եկեղեցիներ շինեցին, վկայարաններ հաստատեցին. որոնց համար անձամբ կ'աշխատէր և ինքնին Աշխէն թագուհի, գերազոյն օրինակ մը տալով իր քրիստոնեայ սրբոտին խոնարհութեանը։ Եթէ հեթանոս ժամանակը առաքինի երևցեր էր, հիմա բուն գործով ալ կը ցուցներ։ Ասիկայ ալ բաւական չեղաւ իր որտին փափաքը լեցնելու, և Տրդատ թագաւորէն հրաման առնելով Գառնի քաղաքը քաշուեցաւ, զոր քիչ առաջ ամրացուցած էր Տրդատ, և հոն առանձին տեղ մը միայնացած, մեծաւ ճգնութեամբ և մեծագոյն զարմանքով բոլոր Հայաստանի՝ իր սուրբ կեանքը կնքեց. որուն յի-

շատակը և տօնախմբութիւնը Հայաստանեայց եկեղեցին կը կատարէ Տրդատայ հետ, յունիս ամսոյն մէջ։

2870
ա

ՊԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գոս. Ոչ ճա. Ճուճ ասոց
ՀՍԽՀ-ՍՍՀ Ա.
ԱՄ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ք. ՄՍԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱՎԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

572

703

ՍԱԹԻՆԻԿ

Հայկական վիպասանութեան մէջ դուցէ չկայ աւելի գողտրիկ յիշատակ մը քան զՍաթինեկան, գեղեցիկ դրուագ կամ քերդուած ձևացընելու։ Որչափ ալ մութ ըլլայ մեզ Ալանաց ծագումը ու պատմութիւնը, սակայն այսչափս յայտնի է որ չեն այն խուժադուժ ազգերէն, որ Կաւկասու շրջակայքը կը բնակին, և որ ստէպ մեր պատմութեանց մէջ յերևան կու գան, ինչպէս են Թաւասպարը, Հեճմատակը, և ասոնց նման ուրիշ այլատարազ անուանք։ Ալանք շատ հեղ կը կոչուին ազգ «Քաջայց և Ազնուաւորաց» իրենց կարճութեանը պատ-

ճառաւ։ Բայց իրենք ալ ունէին իրենց արշաւանաց եղանակները և ժամանակները, հինօրէն Կովկասու դռներէն անցնելով. այսպիսի դէպքով մը եղած է նաև Սաթինկայ վէպքը։

Մեր Մելիքն Արտաշէսի դեղեցիկ աշխարհաշինութիւնքը, դաստակերտներ կառուցանելը, Վիշապաղանց՝ այս ինքն Աժդահակայ ցեղին հետ պատերազմներ մղելը, և անոնց որդւոց մէջ եղած գրժոութիւնքը՝ մանրամասնաբար չի պատմեր մեզի Խորենացին, ըսելով՝ թէ «Յայտնի են քեզ 'ի Վիպասանացն, որ «պատմին 'ի Գողթան». սակայն ափսոս որ Գողթան նուագներն ալ լռեր անյայտացեր են։ Արտաշէս իր փառաւորութեան օրերուն մէջ կ'երթայ հաստատելու իր բնակութիւնը 'ի գետաքառնունս Երասխայ և Մեծամօրի. և հոն ամրացընելով իր թագաւորական դահը, և զինքը յապահովի կարծելու ժամանակ՝ յանկարծ Ալանք հիւսիսական լեռնցիներով Կովկասու դռները կը բանան խուժելու 'ի Հայաստան։ Վրացիք և ուրիշ սահմանակիցք անդրդրդ՝ անձնատուր կ'ըլլան ինքնակամ.

բայց Արտաշէս կը խմբէ իր զօրաց ամբոխը և կը ճակատի ընդդէմ Ալանաց քաջաց։ Կ'ընկերակին Ալանք և պարտութիւն յանձն կ'առնուն, թագաւորին որդին ալ գերի կը բռնուի։ Այս յետին դիպուածով թագաւորին և ընտանեաց սիրտը կոտրած՝ զօրքերուն ալ զէնքերը կը թուլնան։ Ամենայն ինչ յանձն կ'առնու Ալանաց թագաւորը՝ որ միայն զորդին ձեռք բերէ. բայց Արտաշէս աքիլլական գոռոզութեամբ մը կը մերժէ ամենայն պաղատանք։ Այն ատեն գերեալն քոյրը օրիորդն Սաթինիկ՝ հոմերական քարոզից նման կու դայ թարգմաններով երկուց բանակաց մէջ տեղ, և այսպէս կը զրուցէ առ Արտաշէս իր լեզուովը, և թարգմանք կը թարգմանեն. «Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս, որ «յաղթեցեր քաջ ազգին Ալանաց, եկ «հաւանեաց աչագեղոյ դստերս Ալա«նաց՝ տալ զպատանիդ. զի վասն միոյ «քինու ոչ է օրէն դիւցազանց զայլոց «դիւցազանց զարմից բառնալ զկեն«դանութիւն, կամ ծառայեցուցանե«լով և 'ի սարկաց կարգի պահել, և թըշ«նամութիւն յաւիտենական 'ի մէջ եր-

«կոցունց աղգաց քաջաց հաստատել»։ Թագաւորն Արտաշէս քան 'ի գեղեցիկ իմաստից՝ աւելի 'ի գեղց օրիորդին յափշտակեալ՝ յանձն կ'առնու զամենայն դաշինս, միայն թէ զՍաթինիկ 'ի հարանութիւն ածեն իրեն։ Շատ աժան երևեցաւ Ալանայ թագաւորին այս փոխանակութիւնը՝ «Եւ ուստի, կ'ըսէ, «տացէ քաջն Արտաշէս հաղարս 'ի հա«զարաց և բիւրս 'ի բիւրուց ընդ քաջազ«գոյ կոյս օրիորդիս Ալանայ»։ Հարսնութեան օրը հասաւ, բամբռունք կը նուագեն.

«Հէծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ.
Եւ հանեալ զոսկեօղ շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ դեսն,
Եւ ձգեալ զոսկեօղ շիկափոկ պարանն՝
Ընկեց ի մէջք օրիորդին Ալանայ.
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր»։

Այս սակաւատող երգս թերևս ամբողջ դիւցազներգութեան մասն ըլլալով, և ամբողջ պարագաներն ալ ծանօթ չըլլալով մեզի՝ մթին է իմաստը. և խորհնացին կը գոհանայ մեկնելով միայն «Ոսկեօղ շիկափոկ պարանը», թէ

«Քանզի պատուեալ է առ Ալանս մորթ «կարմիր, լայքա շատ և ոսկի բաղում՝ «տուեալ 'ի վարձանս, առնու զտիկին «օրիորդն Սաթինիկ»։ Դարձեալ վիպասանքն հարսին և փեսին կողմանէ առատաձեռնութիւնը նկարագրելով կ'երգեն. «Ցեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի, Ցեղայր մարգարիտ 'ի հարանութեան Սաթինկան»։ Այս հարսանեաց պատճառաւ միաբանեցան Ալանք և Հայք. մինչև յետ ժամանակաց երբ Ալանայ թագաւորն մեռնելով՝ բռնաւոր մը գլուխ քաշելով Սաթինկայ եղբայրը հալածեց և բռնակալեց, Արտաշէս զրկեց յԱլանս իր քաջ սպարապետը Սմբատ, որ զբռնաւորն հալածեց վանեց, և Սաթինկայ եղբայրը նորէն առջի պատուոյն հասցունելով խաղաղացուց երկիրը։

Սաթինիկ շատ կտրիճ և հանճարեղ, քիչ մ'ալ անհանդարտ զաւակներ ունեցաւ յԱրտաշիսէ. որոնք նախ տէրութեան կառավարութեան և զօրավարութեան գործոց մասն, յետոյ երեքն թագաւորեցին հետ զհետէ. իր արքունեաց մէջ քրիստոնէութիւն ալ քարո-

զեցաւ, և աղգականներէն ոմանք հաւատացին 'ի Քրիստոս, և յետոյ նահատակեցան ալ. ասոնք են Ս. Սուքիասանք. Սաթինիկ ալ չընդդիմացաւ քրոջութեանը, բայց հաւատալուն նշան չկայ։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱՎԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԳՐՈՒՄՔԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈՒՍԻՍ-ՍՈՒՐԱ
Ս. ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՒ

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ

Երբ Արտաշիր թագաւոր Պարսից՝ դաւաճանն կենաց Խոսրովու, հասաւ իր նպատակին սուսերամահ սպաննելու Հայոց Խոսրով թագաւորը, բազմութիւնք նախարարաց դիմեցին Հռոմայեցւոց՝ օգնութիւն գտնելու. բայց Արտաշիր զանոնք ցիրուցան ըրաւ։ Այս կոտորածէն յուսահատեալ Հայք, ոմանք Հռովմայեցւոց քով անցան, ոմանք ալ առանձին ամուր լերանց ապաւինեցան. ասոնց մէջ էր նաև նախարարն Օտա Ամատունեաց ցեղէն, որ հետը ապրեցուցեր էր նաև զԽոսրովիդուխտ՝ Խոսրովու աղջիկը. իսկ ուրիշ

Նախարար մ'ալ Արտաւազդ Մանդա-
կունի՝ առեր փախուցեր էր զՏրդատ՝
զորդին Խոսրովու. ասով ապագայ Թա-
գաւորն և Թագուհին աստուածային
խնամով մը աղատեր էին այն արիւնը-
ռուշտ բռնաւորին ձեռքէն։ Օտա Խոս-
րովիդխտոյ հետ որջացեալ կը բնակէր
«Իբրև 'ի կաղաղի հանդարտութեան»,
կ'ըսէ Խորենացին, Ընոյ ամուր բեր-
դին մէջ։ Երբ Արտաշիր կասկած առաւ
Թէ նախարարացմէ մէկն աղատեր է
Խոսրովու որդւոց մէկը, կատաղի մոլեգ-
նութեամբ մը հրամայեց որ տնով տե-
ղով ջնջեն այն նախարարին ճեռը. իսկ
փախստականն Տրդատ օրէ օր համբաւ
ստանալով քաջագործութեամբը երևե-
լի կ'ըլլար 'ի դրան կայսեր, մինչև մե-
ծագոյն յաղթութեամբ մը հայկական
և կայսերական զօրք դիմեց 'ի Հայա-
ստան։ Մեծաշուք պատուով ընդառաջ
ելան իրեն տեղացի Հայք և մեծ սիրով
ողջունեցին իրենց Թագաւորը։ Հոն զի-
բար կը գտնէին, կը գրկուէին քոյր և
եղբայր, Տրդատ և Խոսրովիդուխտ։ Տըր-
դատ ձեռք առաւ վարչութեան գաւա-
ղանը՝ միաբանելով իրեն քրոջը հետ.

և զՕտա հաղարապետ կարգեց Հայոց.
որոց երկուքին վրայ ալ այսպիսի գո-
վասանական տողերով կը խօսի մերս
Պատմահայրն և Բերթողահայր. «Գտա-
նէ «(Տրդատ) զՕտա՝ սնուցեալ զքոյր
«իւր Խոսրովիդուխտ, և պահեալ ըզ-
«դանձան ամրոցաւն հանդերձ՝ յոյժ եր-
«կայնմտութեամբ. քանզի էր արդարև
«համբեր, ժուժկալ և առաւել իմաս-
«տուն. զի թէպէտ և ոչ ծանեաւ ըզ-
«ճշմարտութիւն յաղագս Աստուծոյ,
«սակայն զստութիւն կռոցն գիտաց։
«Նոյնպէս էր և սան նորա Խոսրովի-
«դուխտ, կուսան համեստ՝ որպէս զօ-
«րինաւոր ոք, և ոչ ամենևին ունել ան-
«դուռն բերան նման այլ կանանց[1]»։

Տրդատ, դից պաշտամամբը ուսեալ
և անոնց եռանդնամոլ՝ չէր ուզեր օտար
երևոյթ մը տեսնալ իր երկրին ու թա-
գաւորութեան մէջ. այս պատճառաւ
յետ բաղում տանջանաց 'ի վիրապն
ձգեց զԳրիգորիոս՝ որ ետքը աւելի պայ-
ծառացեալ երևայ Հայաստանի վրայ։
Յետ նահատակութեան Հռիփսիմեանց

1 Խոր. Բ. Զբ.

և Տրդատայ պատուհասելուն յԱստուծոյ, հրեշտակ մը իրեք անգամ կըրկնեց իր տեսիլքը Խոսրովիդուխտայ՝ քրոջն Տրդատայ, «թէ ոչ այլ ինչ դոյ բժշկու-
«թիւն հարուածոցն՝ որ եկին հասին 'ի
«վերայ ձեր, եթէ ոչ յղեսջիք դուք
«'ի քաղաքն յԱրտաշատ, ածել անտի
«զկապեալն Գրիգորիոս. նա եկեալ
«ուսուցցէ ձեզ զեղ ցաւոցն բժշկու-
«թեան[1]»։ Վերջապէս զօրացաւ տես-
լեան պատգամը, և Գրիգորիոս յաղ-
թական և լուսապայծառ յերեւան եկաւ
քրիստոնէութեան ջահովը. սկսաւ քա-
րոզել և վարդապետել, յապաշխարու-
թիւն յորդորել և 'ի հաւատս ճշմար-
տութեան։ Յետ լուսանորոգ վարդա-
պետութեանն՝ վասն Քրիստոսի նուի-
րեալ Հռիփսիմեանց մարմինքը իւրա-
քանչիւր տապանաց մէջ կ'ամփոփէին,
և Խոսրովիդուխտ քոյր թագաւորին և
մայրն Աշխէն տիկին՝ «ըստ բրել բրո-
«ղին՝ 'ի հանդերձս իւրեանց ընկալեալ
«զհողն արտաքս պեղէին[2]»։ Արքունիք

1 Ագաթ. ի.
2 Անդ. ՃԶ.

բովանդակ քրիստոնեայ եղած՝ հրաշա-
լի տեսչութեամբ և ոչ թէ զինուց բրո-
նութեամբ, ակնյայտնի սքանչելեաք և
ոչ կուրօրէն կամ առ երկիւղի սպառ-
նալեաց՝ կը պաշտէր զճշմարիտ խոր-
հուրդ երրորդութեան համակամ և հա-
ւատարիմ երկիւղածութեամբ։ Ինկէ
վերջը կը թողթէր Տրդատ առ ամենայն
աշխարհքս, խմացունելու այս նորա-
սքանչ գործը՝ այսպիսի վաւերականաւ.
«Տրդատիոս թագաւոր, ամենայն զօ-
«րօք երկրիս Հայոց մեծաց, և Աշխէն
«տիկին, և օրիորդ Խոսրովիդուխտ[1]»։

Հասաւ այն գեղեցիկ վայրկեանը՝ յո-
րում պիտի ընդունէին քրիստոնէու-
թեան հաստատութեան կնիքը, զմկըր-
տութիւն. «'ի ընուլ կետին եդելոյ պա-
«հոցն կատարելոյ, առեալ երանելոյն
«Գրիգորի զաշխարհաբանակն զօրացն,
«և զինքնին զթագաւորն, և զկին նորա
«Աշխէն, և զմեծ օրիորդն Խոսրովի-
«դուխտ, և զմեծամեծսն ամենայն, և
«ամենայն մարդկաւ բանակին ընդ ա-
«ռաւօտն լուսանալոյն յաւին Եփրատ

1. Անդ. ՃԺԲ։

« գետոյն մատուցանէր, և անդէն մկրը-
« տէր առ հասարակ զամենեսեան յա-
« նուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ[1] »։

Ցետոյ ուղղելով քրիստոնէական հաւա-
տոյն գերագոյն օրինակ մը տալ՝ խոսրո-
վիդուխտ քաշուեցաւ առանձին Գառնի
քաղաքը և հոն կնքեց իր սուրբ կեանքը.
բնակելով գեղեցիկ դղեկի մը մէջ՝ զոր
եղբայրն Տրդատ անոր համար կանգներ
էր, և որոյ աւերակաց մէկ մասն դեռ
մնալով՝ կը հիացընէ զտեսողս։

1 Ագաթ. ՃԺԸ.

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ



Մ. ԽՈՐԵՆԱՑԻ

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Մեր ազգային մատենագրաց ամենէն երախտաւորն կըրնայ կոչուիլ Մ. Խորենացի. վասն զի ինքն է որ կը ճանչցընէ մեզի մեր նախահարքը։ Ամենարուեստ վարդապետ մ'է. պատմահարց աղբիւր, բանաստեղծութեան վաւիչ, ճարտասանութեան օրինակ, աշխարհագրաց նախաշաւիղ, քերականաց առաջնորդ, թարգմանչաց պարագլուխ, երաժշտապետ եկեղեցական երգոց, հմուտ 'ի բանասէրս, և նաև մարգարէ նախագուշակ։ Սեփական կոչումն է Քերթողահայր։

Ծնած է չորրորդ դարուն վերջերը

Մշոյ Խորենի գեղը, ուսկից իր անունը առած է. և համարուի քեռորդի Սուրբ Մեսրովպայ և աշակերտ։ Մովսէս ուսմանց սահմանեալ ընթացքը լմնցնելէն եռև ղրկուեցաւ յԱնտիոք, Պաղեստին, Աղեքսանդրիա, Հռոմ, Աթէնք ու Բիւզանդիոն. այս ճամբորդութեանց մէջ շատ հմտութիւններ գանձեց իր սուր մտացը։

Յետ մահուան Ս. Սահակայ և Մեսրովպայ Մովսէս դարձաւ'ի Հայաստան, որոյ թագաւորութիւնն ալ վերցուած դտաւ։ Ասանդութիւն մը կայ թէ ծածկելով իր ով ըլլալը՝ աղքատի և մուրացկանի պէս պտըտեցաւ ատեն մը. բայց Դիւտ կաթողիկոս ճանչնալով զինքը՝ Բագրեւանդայ եպիսկոպոս օծեց։ Ահա այս ժամանակէս վերջը կամ ալ առաջ՝ Սահակ Բագրատունի ասպետն խնդրեց իրմէ որ Հայոց պատմութիւն մը գրէ։ Ծանր աշխատութիւն մ'էր այս. բայց որովհետև Խորենացին արդէն շատ բան կարդացեր և քաղեր էր, յանձն առաւ, և 'ի լոյս հանեց այն երևելի գործը՝ որով Հայք գիտեն իրենց նախնի իշխանաց շարքն ու պատմութիւնը։

Այս գրուածոյս յարգին վրայ խօսելն աւելորդ է, վասն զի ամեն գիտնական անձի ծանօթ է։ Իր Աշխարհագրութիւնն որ նշանաւոր և հետաքննութեան երկասիրութիւն մ'է՝ Եւրոպացւոց ոմանց քննութեան նիւթ եղաւ, իբրև թէ իրեն գրածն չըլլայ։ Ասոր նման տարակոյսներ եղան Պիտոյից գրքին վրայ, որ ճարտասանական ու իմաստասիրական անուանի աշխատութիւն մ'է։ Ասոնցմէ զատ Մ. Խորենացին մեծ մասն ունի հայկական թարգմանութեանց մէջ, ինչպէս որ ինքն ալ կը վկայէ. դարձեալ քանի մը վաւերական ներբողներ ունի, Ս. Աստուածածնայ պատկերին պատմութիւնը, մարգարէական նամակ մը, շարականք. ուրիշ արձակ ու բանաստեղծական գործերն ձեռուընիս չեն հասած։

Վերջապէս իր այսպիսի բազմավաստակ կեանքը կնքեց 'ի Տարօն, ինչպէս կը կարծուի, Զենոնի կայսերութեան ժամանակ, ըստ ոմանց իբր 120 տարուան յարգոյ և սիրելի ըլլալով թէ բանասիրաց թէ ռամկին, միով բանիւ

բոլոր ազգին. որ զինքը սրբոց կարգը դասեց, և իր յիշատակը կը տօնէ Հայաստանեայց Եկեղեցին։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱՆԻԷԼԻ ՏՊԱՐԱՆԸ

ՄԵԾՆ ՎԱՐԴԱՆ

Այս անուամբ Հայոց պատմութեան մէջ երկայն էջեր բռնող անձն՝ այնչափ հռչակեալ է, այնչափ համբաւեալ յաղագս, որ դրեթէ և 'ի սկզբանէ եղած հայ զօրավարաց և իշխանաց մէջէն՝ ամենասիրելին որ և է հայ սրտի, և ամենէն աւելի պատուեալ և մեծարեալ, ըստ իւրում արժանաւորութեան։

Ինքն որդի էր Համազասպայ Մամիկոնէից տեառն, որ Հայոց սպարապետ էր և երբեմն իշխանապետ, և կին առած էր Մեծին սրբոյն Սահակայ Պարթևի դուստրը։ Վարդան իր մանկութեան գեղեցիկ և շահաւէտ օրերը երկու

իրեն նման սիրուն ու գեղեցիկ հարա-
զատացը հետ, Հմայեկայ և Համազաս-
պենի, անցուց իր խնաստուն և աստուա-
ծարեալ պապուն՝ Ս. Սահակայ քով, որ
ամեն ջանքը ըրաւ զիրենք կրթելու, և
այնպէս խոր և հաստատուն տպաւորեց
արարչին սէրն և եռանդը անոնց փա-
փուկ և առոյգ սրտից մէջ. որ յետոյ
աճելով ու զարգանալով հարիւրապա-
տիկ ու հազարապատիկ արդասաբեր
եղան:

Մանկութեան ժամանակը այսպէս
օգտաւէտ անցունելէն ետքը, շատ
բարձր պատիւներու և աստիճաններու
արժանաւորեցաւ Վարդան. իրեն բա-
րեբարոյ ձիրքերով, խնաստութեամբն
և քաջութեամբ: Նախ երբ սուրբն Սա-
հակ զինքը սրբոյն Մեսրոպայ հետ ղրը-
կեց առ կայսրն, փոքրն Թէոդոս, 'ի
Կոստանդինուպոլիս՝ խնդրոյ մը հա-
մար, կայսրը զիրենք պատուով մե-
ծարելէն ետքը, Վարդանայ ստրատե-
լատութեան պատիւ տուաւ երկու տա-
րի ետքը, երբ հաշտութեան համար
Պարսից դուռը գնաց Սմբատ ասպետին
հետ. վասն թագաւոր զինք Մամիկո-

նէից տան իշխան դրաւ. նոյն իշխանու-
թիւնը յետոյ Յաղկերտ թագաւորն ալ
կրկին հաստատեց յամի 442. և վեր-
ջապէս իր աղգէն ալ թագաւորի տե-
ղակալութեանը կամ արքունի տան
պահպանութեանը պաշտօնը ընդունե-
ցաւ, որ է ըսել քիչ ժամանակի մէջ,
թէ պատուով և թէ քաջութեամբ նոյն
ատենի աղգային և օտար նշանաւոր
զօրավարաց շատէն վեր անցաւ:

Այս պատիւներն և մեծութիւնքն ոչ
միայն իրեն տոհմային ազնուութենէն
առաջ կու գային. որուն կողմանէ ալ
շատ բարձր աստիճան ունէր, այլ գրե-
թէ բոլոր իրեն քաջութեան և խնա-
տութեանն արդիւնք էին: Վասն զի քա-
նի՞ զօրավար կրնանք գտնել, ոչ միայն
նոյն ժամանակին, այլ և բովանդակ
պատմութեան մէջ, զօրավար՝ որ Վար-
դանայ նման 42 մեծամեծ ճակատա-
մարտից մէջ մտած ըլլայ՝ և շատին յաղ-
թանակած և շատն օտարաց ծառայու-
թեան մէջ ընելով, մանաւանդ Պար-
սից, որոց ոմանց թագաւորներն ալ ա-
կանատես եղած և զարմացած էին ա-
նոր քաջութեան և արիութեան վրայ.

և անոր պիտանութիւնն ալ լաւ իմացած. ինչպէս յետոյ երբոր Յազկերտ Թագաւոր չարեայապարտ Վասակայ դատակնիք կը կարդէր, կ'ողբար ու կը ցաւէր բոլոր իր աշխարհին զօրաց և զօրավարաց կոտորածէն աւելի Վարդանայ մահուան վրայ. ըսելով «Թէ զայնպիսի քաջ և պիտանի և զվաստակաւորն մեր՝ զՎարդան, ... կայսր և կամ Հոնաց արքայ բռնութեամբ յինէն հանել կամէին, ամենայն Արեաց ուժովս կռուէի. և չտայի հանդչել, մինչև այսրէն յիս հանէի»։

Բայց Վարդանայ մեծահանճար իմաստութեան և անյաղթելի զօրութեան ասպարէզներն աւելի իրեն կենաց վերջին օրերուն պահուած էին. յորում՝ այն հանճարն և քաջութիւն՝ զոր մինչև ցայն վայր կերպով մը աւելի 'ի փառս ազգին և 'ի պատիւ անձին փայլեցուցեր էր, հարկ եղաւ անկէց եաքը յօգուտ նորին և 'ի մեծագոյն շահ անձին գործածել, տեսնելով այն երկու մշտավառ ջահերը, զոր 'ի մանկութենէ խորարմատ 'ի սրտին բորբոքեր էր, սէր ճշմարիտ կրօնից և սէր ազգին. զրժ-

բախտութեամբ՝ այն ատեն երկուքն ալ մէկ մեկէ աւելի վտանգի մէջ։

Վասն զի այն օրեր Պարսից Յազկերտ Թագաւորն յամի 450, իւր տէրութեան մէջ եղած քրիստոնեայքը հալածելով, Հայոց ալ իր չար կամքը կը յայտնէր հրովարտակաւ և մեծամեծ սպառնալիքներով։ Հայոց զլխաւորք սրբազան Յովսէփ կաթողիկոսով մէկ տեղ ժողովեցան և հրովարտակին պատասխանը տուին՝ Թագաւորին այնպիսի կամքը կատարելն անկարելի ցուցընելով։ Ասոր վրայ զայրացած Յազկերտ՝ Հայոց զլխաւորները դուռը կանչեց։ Եւ թէպէտ հոն Վարդան ամենուն բերնէն պատասխանատու եղաւ Թագաւորին առջևը, և խելացի կերպով ցուցուց անոր՝ Հայոց վրայ ունեցած իշխանութեան սահմանը, իրենց հաւատարմութիւնը և երախտիքը. այլ 'ի վերայ այսր ամենայնի այն դիւաբախ դաղան դարձած Յազկերտին քարացեալ սիրտը ուրիշ ճար չեղաւ գիջեցընելու բայց եթէ պզտի սխալման մը մէջ ընկնելով. ոպտրով դարձան իրենց հայրենիքը արտաքսուած իբրև արևապաշտ արևակէզ սա-

ցեալ, դժբախտութեամբ ումանց մինչև ներսերն ալ սեցած։

Իսկ Վարդան՝ որ արդէն գիտէր և իմացած էր կանուխ կատարուած գործոյն անարժանութիւնը, իր երկիրը դառնալուն պէս մէկէն կատարեալ նոր-ոգմամբ քրիստոնէական կրօնից հաւատոյ, ուխտ ըրաւ հոգւոր հարց առջև, անկէց ետքը ինքը զինքը բոլորովին ա-նոր պաշտպանութեան նուիրելու մինչև ցմահ՝, ինչպէս որ արդէն խորին նրբութեամբ մը ցաղկերտին առջևը զրուցած էր։ Եւ այնպէս ալ ըրաւ. մոգերը Հայաստանէն հալածելով, ատրուշաններ-ը կործանելով, թշնամի գունդերը խորտակելով և վերջապէս ինքը զինքը ալ Արտաշու համաշխարհական քաղա-քակրթն պատերազմին մէջ մեծ քաջութեամբ և ուրախ սրտիւ նուիրելով ա-նոր ձեռքը, ուսկից կը յուսար և կը փափաքէր առնուլ անթառամ պսակը որուն հասաւ իրեն գործակից քաջ, ուխտապահ և արժանաւոր կորիւնե-րով, զորս յայն հրաւիրեր էր՝ ըսելով, » Գունդ բաղում հասեալ զայ, բերելով աստուածասիրաց պսակս երկնա-

ւորս, արդ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեցէք՝ զի մի վրիպիցի ոք և զղջանայցէ », զոր յոժարութեամբ լսած էին վաթսուն հազարի չափ ուխտապահ քաջք. որոնց մէջ մնած էին նաև երանելին Յովսէփ Կաթողիկոս, եպիսկոպոսունք, քահանայք և բոլոր եկեղեցականք։

Մեծին Վարդանայ սուրբ նշխարքը պատերազմէն վերջ Մամիկոնեանց հաւատարիմ ուխտապահք վերցուցին, և յետոյ ասդիս անդին ցրուեցին՝ ի հաւատացեալս։ Վարդան որովհետև արու զաւակ չէր թողած, Մամիկոնեանց իշխանութիւնը իւր Հմայեակ եղբօր Ցնաց՝ որ մեծ պատերազմէն անվտանգ աղատած էր. այլ քիչ մը վերջը ինքն ալ նոյնպէս հաւատոյ մարտի մէջ նահատակեցաւ. և անցաւ Վարդանանց նահատակաց թիւը, որոնց յիշատակը ամեն մէկ տեղ կը տօնէ Հայոց եկեղեցին երգերով և փառաբանութեամբ։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ԳՈՅԼ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Այս երևելի անձն՝ այն մարդիկներէն մէկն է, որոնք ոչ միայն քաջութեամբ այլ և սրամիտ ու յանդուգն խորագիտութեամբ յաջողեցան։

Գայլ մականունը, որ նոյն ժամանակի մարդիկն իրեն տուեր են, յայտնապէս կը ցուցընէ ինչ բարուց տէր ըլլալը. այսինքն, անդրդուելի վայրագութեան, կամ լաւ ևս ըսեմ գայլանման կտրճութեան հետ՝ աղուիսու հնարագիտութիւն։ Բայց ունէր նա և զեղեցիկ կրօնասիրութիւն մը. և Հայրենեաց վրայ պատերազմելու ժամանակ՝ միանգամայն պաշտպան և վրէժխնդիր էր սուրբ

հաւատոց։ Մուշեղայ Մամիկոնեան զօ-
բավարին ընտրութիւնն ալ կը վկայէ
մեր Գայլ Վահանին նշանաւոր ըլլալը։
Վասն զի երբ այս մեծանուն զօրավարս,
յաղթանակաց ու առաքինութեանց
փառքովը ծերացած, խաղաղութեամբ
կը հանդչէր իր Տարօն գաւառը, խոս-
բով Բ. Պարսից թագաւորն Յունաց փո-
կաս կայսեր դէմ երթալով, դեսպան
ղրկեց Մուշեղայ՝ իրեն օգնութեան
գալու, դիտնալով առաջուց անոր քա-
ջութիւնը։ Մուշեղ դանդաղեցաւ եր-
թալու, վասն զի անիրաւութիւն մը
կրեր էր խոսրով թագաւորէն. բայց
չերթալն նորէն սաստիկ բարկութեամբ
և սպառնալեաց լցուց զխոսրով. որ երբ
յաղթական դարձաւ Յունաց աշխարհ-
քէն, իր Միհրան քեռորդին 10,000
զօրքով Տարօն ղրկեց (604). պատուէր
տալով որ զերկիրը թալէ, և անոր
տէրն ալ շղթայակապ իրեն բերէ։ Ծեր
առիւծն Մուշեղ, իր արթուն աչքերը
դարձուց ընիկ հայրենական գաւառին
վրայ, փնտռելու իրեն համբաւոյն և ա-
րութեանցը արժանաւոր յաջորդ կորիւն
մը, և գտաւ զԳայլն Վահան. որուն

յանձնեց (604) ոչ միայն Պարսից հետ
պատերազմիլը, այլ և բոլոր Տարօնոյ իշ-
խանութիւնը իրեն և իր յաջորդացը
թողուց, վասն զի ինքը անզաւակ էր։

Միհրան անցնելով Հաշտենից գա-
ւառը, հասեր էր մինչև Արձան լեռը,
ուր թողուց 2,000 մարդ, փախչողնե-
րը բռնելու համար. անկէ իջաւ 'ի Տա-
րօն, և գալով 'ի Մեղտի, մարդ ղրկեց
Աստղօն ամրոցին վրայ. ասոնք հոն ին-
նակեան վանքին քով Եօթն խոտաճա-
բակ ըսուած ճգնաւորները նահատա-
կեցին. և վերջէն բոլոր բանակովը ին-
քը Միհրան ալ դէպ 'ի Աստղօն ճամ-
բայ ընկաւ։ Ան ատեն նորընտիր տէրն
Տարօնոյ խորամանկն Վահան, չուզե-
լով իրեն հպատակներուն և ոչ մէկուն
կենացը վնաս հասցընել, կեղծեաց խա-
ղաղութիւն խնդրեց Պարսիկ զօրավա-
րէն։ Միհրան իրեն թագաւորին պա-
տուէրը անոր առջևը դրաւ, որ էր Մու-
շեղայ գերութիւնը։ Վահան անոր ու-
ղածը խոստացաւ կատարել, պայմանաւ
որ Տարօն գաւառը ձեռքէն չառնուն.
որուն Միհրան հաւանեցաւ։ Ան ատեն
Գայլն Վահան շտապաւ փութաց եր-

թալու Օձ ըսուած քաղաքը, և հոն՝ ինչպէս որ մտածեր էր, ամենայն ինչ կարգի դնելէն վերջը, գնաց առ Միհ-րան, որ նոյն ատենը Մուշ աւանն էր. և հաւանեցուց զինքը որ իր զօրքերէն 4000 հոգի տայ իրեն, որոնցմով ոչ միայն Մուշեղայ բարեկամները, այլ և զինքն իսկ զՄուշեղ կապած իրեն առ-ջևը բերէ։ Միհրան խաբուելով, 4000 զօրք յանձնեց անոր ձեռքը. զորոնք առնելով Վահան՝ իջաւ խարձ ըսուած գեղը, և անոնցմէ հոն 50 հոգի թո-ղուց, պատուիրելով որ երբ իրենց մարդ խաւրէ՝ իր նշանովը, երթան առ Միհ-րան, և ուրիշ 2000 զօրք ալ բերեն Օձ քաղաքը։ Մնացած գնդովը երբ հասաւ Օձի մօտ, հրաման տուաւ անոնց, որ իրեն ետևէն խաղաղութեամբ քաղա-քը մտնեն, ներսէն զինուած, և նշան տալու ժամանակ սկսին անխնայ սպան-նել քաղաքացիները։ Երբոր Օձի դռնէն ներս մտան, Գայլն Վահան զանոնք մէ-կիկ մէկիկ առանձին տուներ բաժնեց, ուր տեղ՝ դարանամուտ կարիճ մարդիկ-ներ կը սպասէին, և Պարսից զօրքերէն որոնք որ ներս կը մտնէին, անձայն կը

խղդէին։ Այս կերպով բոլոր բերած գունդը ջարդեց Վահան։ Յետոյ իր հա-ւատարիմ ծառաներէն մէկը խաւրեց այն յիսուն մարդկանց, որոնք Խարձ գեղը կը սպասէին. որպէս զի 2000 զօրք Միհրանէն երթան բերեն։ Ասոնք դեռ չեկած, սպաննուած Պարսիկներուն զգեստները՝ Հայոց հագցընել տալով, քաղքին դուռը կեցընել տուաւ. և պատուիրեց, որ երբ բուն Պարսից գունդը հասնի, յաղթական փողերը զարնելով ներս մտնեն։ Հրամայածին պէս ըրին. բայց Պարսից զօրքը ներս դեռ չմտած, անոնցմէ քսան հոգի իբրև քաղաքին առման աւետաւոր՝ առ Միհ-րան ղրկեց Վահան. իսկ մէկալնոնք անկասկած փողոցներուն մէջ մտնե-լու ատեն, ծածուկ զրահաւորուած մարդիկներէն կը սպանուէին, և Վահան ալ ճամբաները բռնած էր իրեններ-ով, որպէս զի չըլլայ թէ մէկը փախչ-ելով՝ Միհրանայ իմաց տայ եղածը. և յիրաւի այս բաղդին մէկ հոգի մ'ալ չհանդիպցուց։

Այս յաջողութիւններէն վերջը, Վա-հան 800 Հայաղդի կարիճներ առած՝ Օձ

քաղքէն ելլալով, անոնցմէ 400ը Մեղ-
տեայ ճամբուն վրայ թողուց. 200ը
Ծծմակ ըսուած տեղը դարանի կեցուց,
և միւս 200ն ալ իրեն հետ առնելով՝
գնաց առ Միհրան 'ի Մուշ աւանը. և
դանդատ ըրաւ՝ որ իրմէ առած զօրքե-
րը Օձ քաղքին տիրելէն ետքը, զինքը
չթողուցին որ ներս մտնէ, և կողոպու-
տէն ալ իրեն մաս մը չհանեցին. և ես
գրեթէ հիմակ փախստականի մը պէս
քեզի եկայ։ Այս երբոր լսեց Միհրան՝
բարկացաւ, և 2000 զօրք տուաւ նորէն
իր ձեռքը, որ երթայ ապստամբները
նուաճէ։ Ճամբայ ելաւ Վահան, և Մեղ-
տեայ գետը հասնելուն պէս, անոնցմէ
1000ը արձակեց դէպ 'ի Ծծմակը, ի-
րեն հաւատարիմ մարդիկներէն հարիւր
հոգի առաջնորդ տալով անոնց։ Իսկ
ինքը իրեն հարիւրովը՝ առաւ այն մնա-
ցած Պարսից 1000ը և Մեղտեայ գետը
անցնելով, հոն դաշտին վրայ թողուց
զիրենք որ յանհոգս հանգիստ առնուն,
որովհետև սաստիկ ալ յոգներ էին, և
քնացան։ Այսպէս երբոր խոր կը մրա-
փէին, յանկարծ Վահանին նշան տա-
լովը, իրեն հաւատարիմ համազգինե-

ը պատերազմական փողերը հնչեցու-
ցին, որոնց ձայնէն բազմութիւն Հա-
յոց, դարանէն ելլելով, բոլոր Պարսից
գունդը թրէ անցուցին։ Այս գործս ալ
լմնցընելէն ետքը, փութաց Վահան և
շուտով մը անցաւ 'ի Ծծմակ՝ և հոն դա-
բանի մտաւ. վասն զի մէկալ Պարսից
զօրաց առաջնորդներուն պատուիրեր
էր՝ որ երկայն ճամբաներով զանոնք նոյն
տեղը բերեն, և հանդիստ տան։ Որոնք
երբոր առջիններուն պէս միամիտ կե-
ցեր էին, նոյն պատժոյն և նոյն կոտո-
րածին հանդիպեցան։ Երկու իրիկ օ-
րէն վերջը, դեսպան ղրկեց Գայլն Վա-
հան առ Միհրան, որ ամենայն ինչ
լմնցաւ, և ահա բոլոր զօրքերդ յաղթա-
նակաւ վաղը քեզի կու գան։ Այս խմբագ-
նելով, ինքը նոյն օրը գնաց հարիւր հո-
գիով առ Միհրան, քիչ մը հիւանդ զըտ-
նալով զինքը մխիթարեց, և ըսաւ թէ
վաղը Մուշեղ չղթայակապ առջիդ պի-
տի դայ։ Յետոյ պատճառելով իբր թէ
ծածուկ բան մը ունի խօսելու Միհրա-
նայ հետ, քովի մարդիկները դուրս հա-
նել տուաւ, և հոն սէգով զարկաւ զին-
քը և սպաննեց առանց ճիկ մը հանել

տալու։ Վերջը Միհրանին ատենադպիրը կանչելով, անոր կողմանէ թուղթ մը գրել տուաւ Ղպահունեաց վարշիր անունով Պարսիկ կուսակալին, որ ելեկ օրէն 3000 զօրքով կութ ըսուած ձորին քովի բլուրը գայ։ Յետոյ հնարագիտութեամբ զատենադպիրը և ուրիշ քանի մը երևելի իշխաններ ալ ծածուկ սպաննելով, գնաց Միհրանայ նախարարներուն, որոնք նոյն ժամանակը առանձին տան մէջ խնջոյք կը կատարէին. և դուռը վրանին փակելով, կրակ տուաւ շէնքին և զամենքն ալ այրեց։ Յետոյ շտապելով դիմեց Կութ լեռը, և հոն կանգնեց Միհրանայ վրանը, իր զօրքերը դարանի դրաւ, և հագուեցուց նաև Հայոց՝ Պարսից իշխաններուն և անոնց ծառայից զգեստը, և բանակէն դուրս կեցուց՝ եկող զօրավարը խաբելու համար։ Երբոր վարշիր լերան ստորոտը հասաւ, թողուց հոն իր զօրքերը, և եկաւ ինքը լեռը, կարծելով որ Միհրան հոն է։ Վրանէն ներս մտնելուն պէս զանիկայ բռնել տուաւ Վահան. նա սկսաւ աղաչել՝ որ գոնէ կենացը խնայէ։ Վահան խոստացաւ զինքը կեն-

դանի պահել, եթէ իր ըսածը կատարէ։ Եւ գրել տուաւ անոր ձեռքովը այն գլխաւորին որ վարը բանակը թողուցեր էր իրեն տեղը՝ այսպէս, թէ վաղը ղըրկես 1000 մարդ լերան ոտքին հիւսիսային կողմը, և 1000 հոգի ալ ձորին մօտ, և մնացած 1600ը հոն թողուս, և դու ալ տասը հոգւով ինծի գաս։ Գլխաւորը ըստ հրամանին ճիշդ ամեն բան կատարեց, և ինքն ալ տասը հոգւով եկաւ առ Միհրան. զորոնք Վահան սպաննելէն վերջը, վարշիր զօրավարին ալ ծանր յանդիմանութիւն մը տալով խեղդել տուաւ։ Իսկ Պարսից զօրքերը որ ասդիս անդին բաժնել տուեր ու ցրուեր էր, առաջուց դրած դարանամուտներէն թրէ անցան, և հազիւ 40 հոգի միայն ազատելով՝ փախան գացին այս ամեն արկածները պատմեցին Խոսրով թագաւորին։

Խոսրով ասոնք լսելով զարմացաւ. բայց իր ոխը աւելի ևս զայրանալով՝ ուղեց կրկին վրէժ առնուլ Վահանէն. ուստի շատ զօրքով զվախտանգ Միհրանայ հօրեղբայրը՝ ղրկեց անոր վրայ։ Այս նոր զօրավարս՝ երբ Տարօնայ ծայրը հասաւ, շատ հաւնելով այն կողմե-

րուն՝ չէնքեր և ամրոցներ չինեց հոն և քաղաքները նորոգեց։ Իսկ Վահան լսելով Վախտանգայ գալուստը ամենեին չչփոթեցաւ, և խորամանկութիւնը, որ իրեն առջի զէնքն էր, ձեռք առնելով, տեղեկացաւ Պարսից զօրաց բանակին զօրութիւնը և կարգը. յետոյ ծածուկ կերպով քովի գաւառներուն իշխաններէն շատերը իրեն կողմը ձգելով, մինչեւ Վախտանգ կը կարծէր որ երկչոտ և անգործ կեցեր է Վահան, ինքը անոնցմով զօրաւոր բանակ մը կազմեց։ Վախտանգ դեսպան ղրկեց իրեն, որ գայ հնազանդի թագաւորին. սակայն Վահանայ խիստ պատասխանը զզօրագլուխը սրդողցընելով, հարկ եղաւ որ իրեն դէմ ղրկէ 4000 զօրք, որոնք չաբաչար զարնուելով Վահանայ հետ, իրենց զօրավարովը կոտրուեցան, և 50 հոգի՝ Վահանայ թող տալովը՝ փախան ու Վախտանգայ պատմեցին դժբաղդութիւնը. որ սաստիկ բարկութենէն այն 50 հոգին ալ ինքն սպաննեց, և Ասուր անունով յոխորտ զօրավարը 500 քաջ և կրթուած զօրքով ղրկեց Վահանայ վրայ։ Սա երբ եկաւ և ճակատեցաւ,

նախատել սկսաւ զԳայլ Վահանը. որուն չհամբերելով Հայ զօրավարն հանճարեղ և ահաւոր նենգութեամբ մը՝ ոչ միայն յաղթութիւնը յափշտակեց, այլ և զԱսուր և անոր որդին պատերազմի մէջ չարաչար սպաննեց։ Կռուէս վերջը՝ մեծ վախ մը ձգելով Վախտանգայ սիրտը, դարձաւ Գայլն Վահան՝ի Մուշ, ուր քիչ ատենէն հիւանդանալով մեռաւ (607). իր տեղը թողլով քաջ որդին Սմբատը, որ թէ և հօրը խորագիտութիւնը չունէր, բայց դուցէ աւելի քաջ էր։

Վահանայ ամեն ըրածները չենք կըրնար գովել, և ոչ ստուգութեանը վրայ չտարակուսիլ, այլ բոլորովին անհիմն չըլալուն ալ վկայ է իր Գայլ մականունն։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Մեր ազգային մատենագրութեան մէջ կը գտնենք յեօթներորդ դարու՝ իմաստասիրական և ուսումնական դըրուածոց հեղինակ մը, որ՝ թուաբանական և համարողական գիտութեանց գուցէ իրեն հաւասարող չէ ունեցած յաղգիս, թերևս և յօտարս իր ժամանակին։ Սա է Անանիա Շիրակացի կամ՝ Շիրակուանցի. որ՝ ի տղայութեան՝ ինչպէս պատմութիւնն կ՝աւանդէ, ուսմանց և նորանոր գիտութեանց սաստիկ սէր ունենալով՝ զարմանալի յաջողութեամբ բարոյական և սուրբ գրոց գիտութիւնը ստանալով, արտաքին գիտութեանց

ալ ուղեց պարապիլ, և մասնաւոր թուա-
բանական գիտութեանց, որուն վրայ ա-
ւելի սէր ունէր. ինչպէս ինքն իսկ իր
վարուց պատմութեանը մէջ կը գրուցէ.
« Թուաբանական գիտութիւնք են մայր
ամենայն իմաստից »։ Սկսաւ այս ուս-
ման իրեն առաջնորդող մը փնտռել.
բայց դժբաղդաբար այն ժամանակ
Հայաստանի մէջ այսպիսի գիտութեանց
ոչ գրուածք կար և ոչ ալ ուսուցիչ։
Չի յուսահատեցաւ Անանիա, այլ եր-
կար ճամբորդութեամբ իր նպատակին
դիմեց. նախ կարնոյ քաղաքը գնաց.
հոն ալ ուղածը չգտնելով, ելաւ գնաց
'ի Կոստանդնուպօլիս։ Հոն իր բարե-
կամները խորհուրդ տուին որ երթայ
'ի Տրապիզոն, ուր Տիւքիկոս անուամբ
բաղմահմուտ մարդ մը կար։ Ուրախու-
թեամբ ելաւ դէպ ուղիղ գնաց առ
Տիւքիկոս, և սիրով ընդունելութիւն
գտնելով, սկսաւ այնուհետև անխոնջ
ջանիւ համարողական ուսմանց պարա-
պիլ, և հելլենական իմաստասիրու-
թեան և ճարտասանութեան հմտանալ։
Ութ տարի շարունակ այս ամեն գիտու-
թիւնները ամբարելէն վերջը՝ իր հմուտ

վարդապետին և սիրելի հասակակից
աշակերտակցաց յետին հրաժարական
ողջոյնը տալով, դարձաւ եկաւ 'ի Հա-
յաստան, իր սորված գիտութիւնները
տարածելու։ Բայց ինչպէս միտքը դրած
էր՝ այնպէս գլուխ չելաւ իր սրտին փա-
փաքը. վասն զի կ'ըսէ. « Ոչ ոք եղև
շնորհակալ իմոյ աշխատութեանս. զի
ոչ սիրեն Հայքս իմաստ կամ գիտու-
թիւն, այլ ծոյլք են և ձանձրացողք »։
Բայց այսու ամենայնիւ ունեցաւ հաւա-
տարիմ աշակերտներ, որոնք մեծապէս
օգտուեցան իր գիտութենէն. ասոնցմէ
անուամբ յիշատակեալներն են, Հեր-
մոն, Տրդատ, Աղարիա, Եղեկիել և Կի-
բակոս։

Անանիա Շիրակացին ձեռք զարկաւ
ամեն գիտութեանց վրայ գրելու. ինչ-
պէս ճարտասանութեան և փիլիսոփա-
յութեան և աւելի թուաբանական գի-
տութեանց. գրեց նաև վարդապետա-
կան ճառեր և ընտիր շարականներ, զոր
կ'երգէ փառաւորապէս Հայաստանեայց
եկեղեցին։

Շիրակացւոյն գլխաւոր երկասիրու-
թիւնն կը սեպուի իր աստեղաբաշխու-

թեան գիրքն. երկինքի վրայ խօսելով, հին իմաստասիրաց այլ և այլ ունեցած կարծիքները մէջ կը բերէ. դաւնալով երկրիս և ծովու վրայ՝ մանրամասնաբար կը խօսի, ընդհանրապէս սրբոյն Բարսղի հետևելով. և թէպէտ սխալ կամ հակառակ դրութիւններ ալ ունի, ըստ կարծեաց ժամանակին, այլ և շատ ուղիղ տեսութիւններ։

Ուրիշ ընտիր և օգտակար երկասիրութիւններ ունինք Շիրակացւոյն անուամբ, ինչպէս են ժամանակագրութիւնք, և ցաղագս չափուց և կշռոց կոչուած գիրքը, որուն մէջ սուրբ Գրոց մէջ յիշուած չափուց և կշռոց համառօտ մեկնաբանութիւն կ'ընէ։ Ուրիշ գրուածներ ալ կան իրեն անուամբ, բայց ոմանք երկբայական են, ոմանք ալ յայտնապէս իրենը չեն։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ՆԵՐՍԵՀ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Վարդանանց նահատակութենէն ետքը՝ Պարսկաստան գերի գացող Հայ նախարարաց մէջ ամենէն նշանաւորն էր Արշաւիր կամսարական, Վարդանայ փեսայն. իր խոհեմութեանն համար՝ այլ և այլ նուիրակութեանց ղրկուած էր 'ի Յունաստան և 'ի Պարսկաստան, և այս յետին բանտարգելութեան ժամանակն ալ Արշաւիր բոլոր նախարարաց բերան էր։ Միայն Հայերն չէին ղինքը սիրողներ, հապա նաև Պարսիկք, Պերոզ թագաւորն ու մանաւանդ իր դայեկորդին Ցղատվնասպ՝ որ ըստ վրկայութեան պատմչին՝ կը սիրէր զԱր-

շաւիր՝ ինչպէս Յովհաննէսի զԴաւիթ, և այս առաքինի սէրը պատճառ եղաւ գերելոց ազատութեան։ Վասն զի Յզատվըշնասպ միջնորդ ըլլալով ազատեց զԱրշաւիր և անոր հետ բոլոր նախարարները։ Այսպիսի առաքինի հօր մը որդի էր Ներսեհ, ունէր իրեն նման երկու եղբայր ալ. յորոց մէկը մանաւանդ կարծես իր էութենէն տարբեր չէր ըմբռներ, և միշտ սիրելի բառով կը յիշուին. «Ներսէհ և սիրելի եղբայր նորին Հրահատ»։ Ներսէհ որ 'ի մանկութենէ իր հօրմէն և ժամանակին հանդամանքներէն, կրօնքէն և ազգէն զատ ուրիշ ոգի չէր ծծած, տեսնալով որ մեծն Վահան Մամիկոնեան կ'ուզէ Պարսից անիրաւ լուծը թօթափել, օգնեց անոր, և իր եղբօրը հետ մէկտեղ առաջին նիզակակից եղաւ. այնպէս որ եթէ գտնուէին բանակին մէջ երկու սիրելի եղբարքն, յաղթութիւնն ապահով էր։

Առաջին անգամ ուխտապահ նախարարք զարնուեցան Պարսից հետ Վարաղկերտ գեղը. ուր Արվշնասպ մեծ բազմութեամբ բանակեր էր. Հայոց կողմանէ կը զօրավարէր Վասակ սեպուհ Վահանայ եղբայրն, որ սակաւաթիւ զօրքը երկու բաժնեց, և մէջ տեղը դրաւ «գքաջն և զընտիր զիշխանն Շիրակայ Ներսեհ», որպէս զի որ կողմն որ տկարանայ՝ օգնութեան հասնի։ Անհնարին է բացատրել Ներսեհի քաջագործութիւնը. արծուի մը պէս սլացաւ՝ խառնակեց չփոթեց Պարսից շարքը, ցրուեց թշնամին, ճամբայ բացաւ նախարարներուն և յաղթութիւնը կատարեց։ Պարսիկք ամչցած այսպիսի պզտիկ գնդէ մը յաղթուելնուն՝ գարնան սկիզբը մեծ բանակով դարձան 'ի Հայաստան Երևելի զօրավարներով։ Վահան որուն նոր օգնական նախարարք ալ հասեր էին, գնաց այն գեղը որ յետոյ Ներսեհի արութեանցը համար Ներսեհապատ պիտի կոչուէր. հոն Յովհան Մանդակունի կաթողիկոսին օրհնութիւնը առնելով՝ Վահան երկու բաժնեց գունդը, և իրեն հետ առաւ ձախ թևին մէջ «ուխտասէր կամարականքն»։ Սատիկ եղաւ պատերազմն. Հայոց մեծ մասը Պարսից բազմութենէն յուսահատած՝ սկսան փախչիլ, և նոյնպէս կը յորդորէին զՎահան ալ։ Բայց անիկայ

սաստեց, և հետն առնելով երկու կտրիճ
կամաբարականը՝ նետուեցաւ թշնա-
մեաց մէջ։ Ներսեհ յառաջեց մինչև
Պարսից բանակին բունը, ուր կը զօրա-
վարէր Ատրվշնասպ, և երկար ատեն
մրցելէն վերջը, զարկաւ ձգեց այն հրա-
կայ մարդը, և դեռ կը շարունակէր
ջարդը՝ եթէ չլսէր Վահանայ փողը։
Դարձաւ Ներսեհ և դտաւ Վահանայ հետ
իր Հրահատ եղբայրը՝ որոնք փախչ-
տականները կը հալածէին, և միաբան
դարձան առ կաթողիկոսն։ Ասկէ վերջը
այլ և այլ անգամ Ներսեհ առանձին
զարնուեցաւ Պարսից գնդերու հետ, մին-
չև անոնք կռուէն և եղանակէն ալ սոխ-
պուած՝ դարձան իրենց կրակներուն։

Հազիւ Հայք քիչ մը ոդի առեր էին՝
երբ Վախտանգ Վրաց թագաւորն՝ խա-
բէութեամբ Հայերը կանչեց իր եր-
կիրը։ Բայց երբ յանկարծ Պարսիկք ալ
վրայ հասան՝ ինքը թողուց փախաւ։
Թէպէտ Հայոցմէ ալ շատերը քաշուե-
ցան, բայց որովհետև կտրիճները հոն
էին՝ պատերազմը խառնուեցաւ։ Երկու
կողմէն ալ մեծամեծ կորուստք եղան.
Հայոցմէ ընկան Վասակ սպարապետ մամ-

կոնեան ու Ծահակ ասպետ Հայոց մարդ-
պանն, իսկ դերիներուն մէջ էր նաև
Հրահատ։

Երիկուն էր երբ ետ քաշուեցան բա-
նակքն. Ներսեհի աչուքներն ամեն դի
կը փնտռէին իր ցանկալի եղբայրը. ա-
մեն կողմ խնդրակք դացին. և երբ
չդտուեցաւ՝ Ներսեհ խմացաւ եղածը.
ընկաւ, թալկացաւ. և այն կտրիճ ա-
ռիւծը տղու մը պէս սկսաւ լալ։ Իր եղ-
բօրը բռնուելէն վերջը կ'ըսէ պատմիչն,
ոչ անկողին մտաւ և ոչ առանց դառ-
նութեան բերանը հաց դրաւ։ Վերջա-
պէս ճամբայ ելաւ, միտքը դրած՝ կամ
յանկարծակի բռնելով Պարսիկները՝
եղբայրը ազատել, և կամ քաջութեամբ
մեռնիլ։ Ամենքը վահանէն սկսեալ ի-
րեն ողբակից էին, և շատերն ետևէն
կ'երթային։

Ճամբան Ս. Լուսաւորչին մատուռ
մը հասնելով՝ ընկաւ դետին և արտա-
սուք իր եղբայրը կը խնդրէր։ Արդար
աղաչանացը լսեց Հայաստանի Ս. Հայ-
րը. և մինչդեռ Պարսիկք պատրաս-
տուեր էին սպաննել զՀրահատ՝ որով-
հետև արեգական չէր երկրպագեր,

անիկայ Պետրոս առաքելոյն պէս բան-
տէն դուրս դանուեցաւ և հասաւ Հայոց
բանակը։ Ամենայն ոք կրնայ երևակա-
յել ինչ զգացին այն երկու տաքուկ
սրտերն՝ երբ իրարու գրկախառնեցան։

Աւելորդ կը համարիմ պատմել մէ-
կիկ մէկիկ Ներսեհի բոլոր պատերազմ-
ները ու քաջութիւնները. այս միայն
բաւական ըլլայ իր արի ու վսեմ հո-
գւոյն նշանակ, որ երբ անգամ մը յան-
կարծակի արշաւելով Պարսիկները գե-
րի տարին այս երկու Կամնարականաց
իշխանուհիքը, Պարսիկք գրեցին Ներ-
սեհի որ եթէ թողու զՎահան՝ իր եղ-
բօրը հետ մեծամեծ պատիւներու կը
հանի, և կ'ընդունին իրենց սիրելի ա-
մուսինները։ Բայց Կամնարականք պա-
տասխան տուին, որ եթէ Աստուած հաւ-
ներ է իրենց գործոցը՝ ողջ առողջ կը
դարձնէ զանոնք։ Եւ յիրաւի Պարսիկք
ամենայն պատուով պահելէն վերջը
զտիկնայքը՝ քիչ առենէն դարձուցին։
Վասն զի տեսնելով որ Հայերը չեն զի-
ջանիր, և իրենք շատ երևելի անձինք
կորսնցուցին, սկսան հաշտութիւն խո-
սիլ, ու Հայաստան խաւրեցին իրենց ե-

ւելի խորհրդականը՝ Նիխոր, Վահան
ալ զՆերսեհ խաւրեց իր եղբօրը հետ։
Յետոյ երբ ամեն բան յարմարցուցին,
Վահան ալ գնաց խօսելու Նիխորին ու
Թագաւորին հետ, և իր տեղ թողուց
զՆերսեհ։ Իսկ խաղաղութիւնը բոլորո-
վին հաստատուելէն ետքը երբ Վահան
Հայոց Մարզպան եղաւ՝ Ներսեհ ալ
մեծամեծ պատիւներ ընդունեցաւ թէ
'ի Թագաւորէն և թէ 'ի Վահանայ,
ինչպէս որ արժանի էր։

Անկէ ետև դառնալով իր երկիրը՝
ցուցուց որ պատերազմէն աւելի քաջ է
'ի խաղաղութեան. եկեղեցիներ շինեց,
դպրոցներ հաստատեց, և ինքնին կ'եր-
թար տեսնելու անոնց յառաջադիմու-
թիւնը ու պարգևներ բաշխելու. միշտ
սիրելի միշտ ցանկալի ըլլալով ամե-
նուն։ Եւ վերջապէս իր նահատակի նը-
ման կեանքը՝ առաքինօրէն պսակելով,
թողուց աշխարհ Ներսեհ անուան աբան-
չելի գաղափար մը։

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ԴԱՍԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

Гос. публичная
ЛОНБ
АБ-СССР
С. Ф. Ивановой

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

Ծնաւ ուրբ հայրապետս 1153ին և, մկրտութեան անուամբ Սմբատ կոչուեցաւ. պանչելի խառնուրդ մը մեր քահանայական և թագաւորական աղգատոհմից, վասն զի իր ցեղն պահլաւեան և հայկական տոհմից խնամութեամբ յառաջ եկած էր։

Դեռ չծնած՝ բարեպաշտ մայրն Շահանդուխտ, Ներսիսի Շնորհալւոյ եղբօր դուստրն, նուիրեց զանիկայ Աստուծոյ. բայց երբ ծնաւ՝ տեսնելով դեռաձին մանկան շնորհալուք կերպարանքը և գեղեցիկ ձիրքերը, չուզեց զաշխարհ զրկել այնպիսի հարուստ աւարէ մը.

սակայն զուր տեղ ջանացաւ. մինչդեռ Աստուած իր տան համար սահմանած ըլլալով այն ճոխ գանձը, գրեթէ մանկան մահու հիւանդութեամբ և անկարծելի հրաշիւք առողջութեամբ մը՝ նորէն զբաղեցաշտուհին Շահանդուխտ իր առջի մտքին վրայ հաստատեց։

Զարդանալով հասակաւ և աստուածային շնորհօք, սկսաւ իր հրեշտակային վարուքն և խնամտուն ծերունւոյ մը խոհեմութեամբ ցուցընել, որ ինքն երկնաւոր և անանց նպատակի մը սահմանեալ է։ Անգամ մը հօրը հետ՝ի Կ.Պոլիս կայսերական պալատը դտնուելով, Մանուէլ կայսրն զարմացած տղուն ազնիւ նաղելի կերպարանաց վրայ, և անկէ ճանչնալով անոր ապագայ հանճարը, դիրկն առած, եթէ քովս մնաս, կ'ըսէր, հօրմէդ աւելի փառաց և պատուոյ կը հասնիս։ Մտիկ կ'ընէի սիրով, ըսաւ Սմբատ, ցեր արքայ, միայն թէ խոստացած փառքդ և պատիւներդ անանց ըլլային, վասն զի ես անանց և մշտնջենաւոր փառաց կ'ուզեմ հասնիլ։

Ա՛ռ ժամանակ մի քաշուած Սկևռայ վանքը, հոն ճգնաղեաց վարդապետի

մը առաջնորդութեան տակ դաստիարակուեցաւ 'ի հոգևորս, միանդամայն և յուսմունս, յոր բնութիւնն տուեր էր իրեն բնածին յաջողակութիւն մը ընդարձակութեամբ մտաց։ Քիչ ատենուան մէջ կատարելապէս սորվեցաւ յոյն և լատին լեզուն, զամէնքը զարմացնելով իր դժուարագիւտ մտավարժութեան և հասողութեան վրայ։

Տասնուվեց տարեկան զինքն՝ որբ ձգեց իր հայրն Օշին Սեբաստոս, կտակաւ յանձնելով Սկևռայ վանականաց՝ որպէս զի ժամանակին զՍմբատ առաջնորդ դնեն նոյն վանքին, որուն եկեղեցին ինքն շինած էր։ Այս բանս շատ ծանր եկաւ Սմբատայ, և կը խորհէր փախչելու. այլ բարեպաշտոն մօրը միջնորդութեամբ ստիպուեցաւ անոր քեռիէն սուրբ Ներսէս Շնորհալիէն քահանայական կարգն առնուլ. սուրբ հայրապետն տեսնելով 'ի նմա աստուածային շնորհաց առատ հոսանքներ, և յետ իւր անոր շնորհալի ըլլալը, քահանայական կարգին հետ անուանակցութեամբն ալ պատուելով զինքը Ներսէս կոչեց։ Թէպէտ և անկէ վերջ սուրբ կա-

Թողիկոսին Հայրական խնամոց վայելից մէջն էր, բայց իր ոսկեվայլ հոգին, աստուածասէր միտքն և հանճարն՝ յանապատս խնդրէր սաւառնել. ուստի զի-ջաւ իր փափագանացն հաղորդ սուրբ Հայրապետն՝ անոր արժանընդունակ խնդրոյն, ու թող տուաւ որ երթայ Սև լեռան ճգնարաններու մէջն իր ճարակը դանայ։ Հոն գնալով յառաքինութենէ յառաքինութիւն Գիտնական Ստեփանոս վարդապետիմը սրբակրօն առաջնորդութեամբ, քիչ ատենէն յայտնուեցաւ իր աստուածախառն իմաստութիւնն, և բռնադատուեցաւ կրօնաւորներէն՝ երթալ քաղաքն և 'ի հոգևորս պապքեալ ժողովրդեան աստուածային բանին բաժակը մատուցանել։ Արբեալ արբեցաւ ժողովուրդն ոչ միայն աստուածային բանիւն, այլ և անոր երկնակրօն վարուց անուշահոտ սրբութեամբն ալ, և ուզեց զինքն եպիսկոպոս ընտրել։

Ներսէս իրմէ շատ վեր համարելով այսպիսի պաշտօն մը՝ թողուց և Սազրու անապատը քաշուեցաւ։ Հոն՝ իր հոգւոյն ընդ Աստուած միանալու տեղն, կրած ամենազգի ճգնութիւններն ան-

պատմելի են, և ուղղին կրնայ գտնալ իր ներբողին մէջ՝ զոր գրեց Գրիգոր Սկևռացի։

Քսանևերեք տարեկան՝ Գրիգոր Տղայ կաթողիկոսէն՝ որ Ս. Շնորհալւոյն յաջորդեց, 'ի հրամանէ և ոչ 'ի կամաց՝ եպիսկոպոս ձեռնադրեցաւ. Տարսոն քաղաքն անպատմելի ցնծութեամբ լցուեցաւ իր նորահրաշ հովուին վրայ, և Սկևռայ միանձունքն զինքն ղրկաբաց առաջնորդ ընդունեցան։

Սուրբ Ներսէս թէպէտ և լի էր աստուածային նախանձու իր հօտին բարւոյն համար, սակայն Աստուծոյ սիրոյն բռնութիւնն զինքը կը ձգէր յանապատս Եգիպտոսի և 'ի լեռն Սեպուհ, տեսնալու գէթ իր հոգւոյն նախահարց սրբավայրքը։

Այնպէս ինչ զՆերսէս արժանապէս Տարսոնեան երկրորդ փող անուանել կու տային Ցունաց և Լատինաց. ընտիր ցեղովն, անուամբ, հանճարով, լեղուովն և սրտով. և իր այնքան բարեմասնութեամբք հանդերձ՝ բաղում վշտաց և նեղութեանց համբերեց, ըստ օրինակի Տեառն մերոյ անտրտունջ. և ինչպէս որ

Քրիստոսի սիրուն աշակերտաց սրբութեան մեծ նշան մ'ալ հալածանքն սեպուած է՝ հարկ էր որ այս ալ անոր վրայ կատարուի։

Տգէտք ոմանք իրենց յամառութիւնը, հնացեալ անկարգութիւններն և առայլ քրիստոնեայ ազգեր սիրոյ պաղոթիւնը՝ նուիրական աւանդներ կարծելով, 'ի Ներսէս անոնց հակառակող մը տեսան, և զանիկայ ինչուան մեր Բ.Լեռնի դիմաց ամբաստանեցին։ Բայց Ներսէս որ իր ամբաստանօղաց կրքով լցուած հոգիէն շատ հեռու էր, և ամէն ջանք 'ի գործ կը դնէր ազգային եկեղեցւոյ զեղծմունքները ջնջել և առջի պայծառութեան հասցընել, որ սիրտ ունէր նախ աստուածասէր և ճշմարտասէր ապա ազգասէր, իր ամբաստանութեանց պատասխան չտալ վտանգաւոր տեսնելով՝ նամակաւ մը միայն զինքն արդարացոյց, Զ.Լեռն շահեց և զոսոխսն կարկեցուց։

Իր կեանքն հայելի մ'է քրիստոնէական վարուց, և 'ի մանաւորի՝ վիճակաւորաց։ Ա.յնչափ դառնադառն վիշտց մէջ, ազգին վիճակը տեսնելով և քննելով, գնաց 'ի Կ.Պոլիս, յԱնտիոք, ամէն ջանք ըրաւ ազգը միաբանել ընդ օտարաց. բայց եթէ աստուածային առանձին նախատեսութեամբ մը չկրցաւ զայս, դէթ կրցաւ շատ անկարգութիւններ վերցընել։ Կնքեց իր առաքինի կեանքը յամին 1198, կենդանի մնալով իր լի աստուածաբանութեամբ և հըմտութեամբ երկասիրեալ գրոց մէջ. որք են Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Ադենաբանութիւն Հռոմկլայի ժողովոյն մէջ, Ճառք 'ի Հաւաքարձուն և 'ի Հոգեգալուստն, Սուրբ Գրոց մեկնութիւններ և քանի մը շարականք. որոց վրայ առանձին խօսել չի ներեր մեր համառօտ գրուածն։ 46 տարուան վախճանեցաւ Ներսէս Լամբրոնացի. սրբազան վարքով և վարդապետութեամբն ալ մեր ազգային առաքելական սուրբ հարց շարակարգը կնքեց։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ԼԵՒՈՆ ԱՌԱՋԻՆ
ՌՈՒԲԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

Մինչեւ դարու քաղաքագէտ իշխողաց ամենէն երեւելի անձանց մէկն է Լեւոն Բ Ռուբինեան, առաջին թագաւոր իր ցեղին։

Թորոս Բ. Ստեփանէ եղբօր որդին է սա. որքաջութեան առաջին փորձը ցուցուց եղբօրը Ռուբէնին աղատութեամբ, զոր Լատին Պեմունդ կոմսն նենգանօք բռներ էր։ Յետ մահուան եղբօրն յամի 1185, Լեւոն յաջորդելով՝ աթոռը փոխադրեց ի Տարսոն, և սկսաւ իր քիչ-ւոր՝ բայց քաջ զօրքովն տէրութիւնն ընդարձակել. վանեց Իկոնիոյ սուլ-

տանը, տիրեց Իսաւրիոյ մինչև ցծովն. պաշարեց զԿեսարիա Պաղեստինոյ, և շատ դանձ առած քաղքին իշխանէն՝ թողուց զպաշարումն և դարձաւ 'ի Կիլիկիա. իր տէրութեան չորս կողմունքն ամրոցներով և բերդերով պարսպեց։ Նորոգեց զՍիս, և աթոռը հոն փոխադրեց, ուր դարձեալ շատ եկեղեցիներ և հիւանդանոցներ շինեց. աստուածպաշտութեամբն, խոհականութեամբն, քաջութեամբ և մեծանձնութեամբ ամենուն և նաև օտար ազգաց պատկառելի և յարգելի եղաւ։ Պաշտպան կեցաւ Ասորւոց կաթողիկոսին, որով անկէ վերջ՝ ինչպէս կը վկայէ Ասսեմանի. Կիլիկիա եղած Ասորւոց կաթողիկոսն Հայոց թագաւորէն կը հաստատուէր։

Երբ Ցուսուփ Սալահադին առաւ զԵրուսաղէմ Արևմտեայց ձեռքէն, նոր խաչակիր զօրք եկան, որոց գլուխն էր Փրեդերիկոս Ա. Գերմանացւոց կայսրն. որ երբ հասաւ յԻկոնիոն, Լևոն՝ Գրիգոր Տղայ կաթողիկոսին հետ ինչուան 'ի Մսիս ընդ առաջ գնաց կայսեր՝ շատ պաշարով, ինքն Մսիս մնալով պաշարը խաւրեց առ կայսրն. կայսրն շնորհակալ ըլլալով՝ խոստացաւ թագաւորեցընել զԼևոն. սակայն ինքն տարաժամ մեռնելով՝ արևմտեայք նորէն կորիզլուս ետ դարձան, Լևոն գրեց առ Հենրիկոս Զ. Փրեդերիկոսի որդին՝ յիշեցընելով իր հօր խոստմունքը. Հենրիկոս խորհրդով և հաճութեամբ Կեղեստինոս պապին, որուն յարգանօք նամակ մ'ալ ուղղած էր Լևոն, ղրկեց արքայական թագմը և արծուէնշան դրօշ մ'ը. ընծայաբերն էր Կոնրադ արքեպիսկոպոս Մոգունտիոյ, որ և հանդիսակից եղաւ թագադրութեան հանդիսին՝ որ Աստուածայայտնութեան օրը յամին 1199 կատարուեցաւ. պսակողն Գրիգոր Դ. կաթողիկոսն էր, որ և թագաւորին հետ շնորհակալութեան գիր ուղղեցին առ Ս. Պապն։

Պաղտատայ ամիրապետն մեծամեծ ընծաներ խաւրելով, և Ցունաց կայսրն ալ ականակապ թագով մը բարեկամութիւն ցուցին Լևոնի, որ աւելի նուրբ քաղաքականութեամբ զամենքն ալ յարգեց՝ առանց մէկու մ'ալ իր մեծանձն աղատութիւնը ծախելու։ Որովհետև իր փափագն էր անկախ տէրութիւն մ'ըս-

տանալ իր աղգին բարւոյն համար. և մեկէն ալ սկսաւ քաղաքական բարեկարգութիւնները հոգալ։ Հասարակաց մեծամեծ շէնքեր շինեց, որոց մէջ երևելի էր մայր եկեղեցին Սոյ՝ Էջմիածին անուամբ։ Մինչդեռ այսպէս Լևոն զբաղած էր իր մեծագործութեանց, Իկոնիոյ սուլտանն որ արդէն կը մխար իրեն դէմ, յարմար առիթ գտնելով՝ յարձակեցաւ 'ի Կիլիկիա և պաշարեց զԿապան բերդը. Լևոն յանպատրաստից դէմն ելաւ, սակայն չյաջողեցաւ, ու նորէն առանց չփոթելու ուրիշ հնարք մը հանճարեց. ժողվեց իր ցիրուցան զօրքն ու գաղտուկ դիմեց սուլտանին երկիրը, աւրեց աւրըշտկեց ու գերեաց բազմութիւն մը բռնեց. ուշ իմացաւ սուլտանն, և հաշտութիւն խօսելով Լևոնի հետ՝ գերիները փոխանակեց, Լուլուայ բերդն ալ վրան տալով։

Նոյնպէս Եգիպտոսի ամիրայն ալ ահաւոր բանակով մը Կիլիկիոյ վրայ սկսաւ քալել, սպառնալով Լևոնի՝ որ եթէ տարեկան հարկ չվճարէ՝ սրով և հրով մաշէ զԿիլիկիա։ Լևոն առ ինքն եկած պատգամաւորաց դիմաց մարդ խաւրեց, որպէս զի երկայն ճամբաներով զանոնք ուշացընեն, ու ինքն յանկարծակի անոնց զօրաց վրայ յարձակեցաւ, որք անպատրաստ գտնուելով հաղիւ կը բացան փախչելով աղատիլ։ Լևոն թշնամիներէն առած վրաններով և դրօշներով պատրաստուած՝ ընդունեցաւ ըզպատգամաւորս, որոնք շուարեցան եղածին վրայ, և գթութիւն պաղատեցին. Լևոն ալ թողուց զանոնք որ երթան։ Երբ անգամ մը Լևոն աներոյը այցելութեան գացեր էր 'ի Կիպրոս, Ներսէսի Լամբրոնացւոյն Հեթում եղբայրն գլուխ քաշեց. դարձաւ շուտ մը բռնեց զապստամբը, բայց Գրիգոր Կաթողիկոսին աղաչանաք աղատ թողուց, միայն ապստամբութեան առիթը վերցուց, անոր ձեռքէն բոլորովին հանելով Լամբրոնի բերդը։

Իր թագաւորութեան վերջի տարիները տէրութիւնը դեռ աւելի ընդարձակեց մինչև ցՋորրորդ Հայս։ Վերջի հիւանդութեանն ատեն կանչեց աղգայինն նախապատիւ իշխանները, ու յանձնեց անոնց թագաւորեցընել 'ի դէմս Հայոց՝ իր միամօր դուստրը, Զապել, որ

հաղիւ 10 տարեկան էր. ու ամէն հո-
գևոր պատրաստութեամբ մեռաւ յամի
1219, յ2 Մայիսի, 34 տարի Հայոց
վրայ իշխելէն վերջը։

Քաջ զօրավար եղաւ, հայրենասէր
թագաւոր և ժողովրդեան հայր, միան-
գամայն և բարեպաշտ քրիստոնեայ։

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

ՀՀ Ազգային գրադարան
NL0418522